



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1038

ՄԱՆԻ ՌԻՍՄՈՒՆԻ

ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱԻԵՏԱՐԱՆԻ

ԵՐԿՐՈՐԻ ՏԻՊ



ՄՈՍԻՈՒՆ

1861.

208

Մ-98

ה'תרי"ט

ספר חובות

ה'תרי"ט

1879



ה'תרי"ט

1879

2010

208

Մ-98

56

ՄԵՆԲ ՌԻՍՄՈՒՆԻՔ

ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ


ԵՒՆՏԱՐԱՆԻ

ԳՐԵՒՆ

Ի ՄՍԵՐԱՅ ՄԸԳԻՍՏՐՈՒՄԷ

կրճատուի և լուսարարի ճեմարանի

ԵՐԿՐՈՐԳ ՏԻՊ



Ի ՄՈՍԻՈՒՆ

Ի Տպարանի և լուսարարի ճեմարանի տպարանի տպարան:

1861.

2001

1904

10384-53



ԱԿ



Օ մատենիկս զայս, մակագրեալ Մ-նի հասանի՝ Սբ-ւոյն
Պատմութեան Ա-տար-նի, Հրամայեմք 'ի տիպ արձանա-
ցուցանել' 'ի պէտս Ազգային դպրոցաց: 'ի 27 Ապրիլի
1861 ամի Փրկչին. 'ի Ս. Էջմիածին:

ՄԱՏԹԻՈՍ

Կաթն-դէղ-ն ամենայն Հայոց:

«Այս են յաւիտենական կեանք, զի ծանկեցեն
զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր
զՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ»:

Յ. Բ. Գ. Գ. 3:

«Ամենայն հոգի՝ որ խոստովանի զՅԻՍՈՒՍ ՔՐԻՍ-
ՏՈՍ մարմնով եկեալ, յԱստուծոյ է՛նա. և ամենայն
հոգի՝ որ ո՛չ խոստովանի զՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ մարմ-
նով եկեալ, չէ՛ նա յԱստուծոյ. . . : Որ ընդունի զՈր-
դին (Աստուծոյ), ընդունի և զկեանսն. և որ ո՛չ ըն-
դունի զՈրդին Աստուծոյ, և ո՛չ զկեանսն ընդունի»:


Ա. Յ. Բ. Գ. 2. 3: Է. 12:



ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆԻՔ

ՍՐԲԱԶԱՆ ԳԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՐԵՏԱՐԱՆԻ



- Հ. ԱՐԵՏԱՐԱՆ ԲԱՌԱՍ՝ ՂԵՆԶ ՆՂԱՆՈՒԿԷ:
- Պ. ՆՂԱՆՈՒԿԷ՝ ԱՆԻՊԷՆԻ (ԱՅՍԻՆՔԻՆ՝ ԲԱՐԻ Ե ՔԵՐԿՐԱՅԻ ԸՈՒՐ) ԿՊՐՈՆՆԱԿՈՂ:
- Հ. ՈՐԲ ՎՐԵՅԻՆ ՂԱՆՏԱՐԱՆԵՐ:
- Պ. ՉՈՐԱ ԱՆՏԱՐԱՆԻԿՔԻՆ՝ ՄԱՍԹԻՆՈՍ, ՄԱՐԿՈՍ, ՂՈՒԿԱՍ, ՅՈՎՀԱՆՆԷՍ:

- Հ. Ի՞նչ լեզուաւ գրեցին:
- Պ. Մատթէոս՝ Նբրայեցւոց լեզուաւ գրեց,
Մարկոս Նգիպտացւոց, Ղուկաս՝ Ասոր-
ւոց, Յովհաննէս՝ Յունաց*:
- Հ. Ի՞նչ ի՞նչ պատմին ՚ի սուրբ Աւետարա-
նի:
- Պ. Պատմին
- տ. Քրիստոսի Օճուունդն:
 - բ. Նորա Մկրտութիւնն:
 - գ. Քարոզութիւնքն:
 - դ. Հրաշագործութիւնքն:
 - ե. Չարչարանքն, Մահն, և Թաղումն:
 - զ. Յարութիւնն:
 - է. Համբարձումն:

* Տէս ՚ի Նախագործիւնս (այսինքն՝ ՚ի Յառաջաբանս)
Հայերէն Աւետարանաց:

ԳԼ . Ե

ՆՊՆՈՒՆԳՒ ՎՐԻՍՏՈՍԻ

- Ն . Յուսմէ՞ ծնաւ Վրիստոս :
- Պ . Ի սուրբ Կուսէն Մարիամայ :
- Ն . Որո՞յ դուստր էր սուրբ Կոյսն Մարիամ :
- Պ . Յովակիմայ և Եննայի :
- Ն . Ո՞վ էր Վրիստոսի հայրն :
- Պ . Նա ըստ մարմնոյ՝ հայր չունէր , բայց կոչեցաւ Որդի Գառնի , և Որդի Յովակիմայ :
- Ն . Ըստ Եստուածութեան՝ ունէ՞ր հայր :
- Պ . Եւ յո՞ վասն զի Որդի էր շօր Եստուծոյ :
- Ն . Ի՞նչ պատճառաւ Որդի Գառնի կոչեցաւ :
- Պ . Եւ յն պատճառաւ՝ որ նորա մայրն Մարիամ՝ Գառնի մարգարէի ցեղէն էր :
- Ն . Ի՞նչ պատճառաւ կոչեցաւ Որդի Յովակիմայ :
- Պ . Եւ յն պատճառաւ՝ որ Մարիամ նշանուած էր սուրբ Յովսէփայ :
- Ն . Սուրբ Յովսէփ յոր ցեղէ էր :
- Պ . Նա ևս Գառնի մարգարէի ցեղէն էր :
- Ն . Ի՞նչ արհեստ գիտէր :
- Պ . Նիւնութիւն :

- Հ. Մարիամ ինչո՞ւ համար կոչի Աստուծո՞ւ
ձեռն կամ Աստուծո՞ւ մայր :
- Պ. Եյնոր համար՝ որ ՚ի նմանէ ծնեալ Վր-
րիստոսն՝ ոչ միայն մարդ էր, այլ և Աս-
տուած, և Որդի Աստուծոյ :
- Հ. Վրիստոսի ծնունդն երբ եղև :
- Պ. Յաշխարհիս ստեղծմանէն չորս հազար
տարի յետոյ, Հերովդէս Ասկաղոնացոյ
ժամանակը :
- Հ. Ո՞վ էր Հերովդէս :
- Պ. Հրէից թագաւոր էր՝ օտարազգի՝ ընդ
իշխանութեամբ Հռովմայեցոց :
- Հ. Ո՞ւր նստէր :
- Պ. Յերուսաղէմ քաղաքումը :
- Հ. Հռովմայեցոց թագաւորն կամ կայսրն
ո՞վ էր այն ժամանակ :
- Պ. Օգոստոս - Հոկտաւիանոս :
- Հ. Հայոց թագաւորն ո՞վ էր :
- Պ. Եբզար՝ Երշամայ որդին :
- Հ. Յո՞ր տեղ ծնաւ Վրիստոս :
- Պ. Բեթղէհէմ քաղաքի մօտ՝ մի այրի մէջ :
- Հ. Յետ ծնանկոյն ո՞ւր դրուեցաւ :

Պ. Մ'որի մէջ:

Հ. Ի նչ անուն գրին Վրիստոսի:

Պ. Օճնդեան ութերորդ օրը անուն գրին նմա ՅԻՍՈՒՍ:

Հ. Որ լեզուի բառ է ՅԻՍՈՒՍ, և զե՞նչ նշանակէ:

Պ. Եբրայեցւոց լեզուի բառ է, և նշանակէ Փրկիչ:

Հ. Որչա՞սաց՝ որ զայդ անունը գնեն:

Պ. Պաբրիէլ հրեշտակապետն:

Հ. Ե՞րբ:

Պ. Երբ որ Նազարէթ քաղաքումը աւետիստուաւ Մարիամու՝ Վրիստոսի ծննդեան համար*:

Հ. Որո՞ց նախ յայտնեցաւ Վրիստոսի ծընունդն:

Պ. Հովուաց՝ որք դաշտումն էին իւրեանց ոչ խարաց պահպանութեան համար:

* Հրեշտակապետի բանն առ Վոյսն Մարիամ՝ այս էր. « Եհս յղասչիր, և ծնցիս որդի. և կոչեսցես զանուն նորա Յիսուս: » (Ղուկ. Խ. 31):

Հ. Ի՞նչպէս յայտնեցաւ:

Պ. Գիշեր ժամանակ յերկնից հրեշտակ իջաւ
նելով՝ ասաց նոցա

«Չեզ աւետիք.

Փրկիչ ծնաւ.

Ուրախ եղիք»:

Հ. Բաց յայն հրեշտակէն՝ այլ հրեշտակներ
ևս իջան:

Պ. Այո՛, շատ հրեշտակներ իջան, և սկսան
երգել «Փառք ՚ի բարձունս Աստուծոյ, և
յերկիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հա-
ճութիւն»:

Հ. Հովիւքն գնացի՞ն զՔրիստոս տեսանե-
լու:

Պ. Այո՛, գնացին շուտով ՚ի Բեթղեհէմ, և
գտաննելով զՔրիստոս՝ երկրպագեցին նը-
մա:

Հ. Ի՞հեթանոսաց ոյք եկին երկրպագելու
Քրիստոսի:

Պ. Երեք մոզքն, որք էին իմաստուն՝ և թա-
գաւորի պէս հարուստ՝ մարդիկ:

- Հ. Յո՞ր կողմերից եկին նորա:
- Պ. Յարեւելեան հեռաւոր կողմերից:
- Հ. Ի՞նչպէս գիտացին նորա զՅիսուսի Վըրիստոսի ծնանիլը:
- Պ. Տեսանելով զնորա աստղը՝ երբ որ յիւրեանց երկիրներումն էին:
- Հ. Պիտէի՞ն թէ ուր է ծնած:
- Պ. Աչ. ուստի երբ հասուն յԱրուսաղէմ, ըսկըսան հարցանել: «Ա՛ւր է նորածին թագաւորն»:
- Հ. Հերովդէս լսեց՞ զայդ բանը:
- Պ. Լսեց, և շատ վախեցաւ:
- Հ. Մոգերուն բան չասաց նա:
- Պ. Եսաց՝ որ յետ գտանելոյ զնորածին թագաւորը՝ իւրեան ևս ծանուցանեն:
- Հ. Ի՞նչ էր նորա ծածուկ միտքն:
- Պ. Ե՛յն էր՝ որ զՅիսուս սպանանել տայ:
- Հ. Ինչո՞ւ համար զայդ չար միտքը ունեցաւ:
- Պ. Ե՛յնոր համար՝ որ չլինի թէ Յիսուս յետ ժամանակի՝ զիւր թագաւորութիւնը յափըշտակէ:
- Հ. Մոգքն կարացի՞ն գտանել զՅիսուս:

- Պ. Այ՛ն, աստղի առաջնորդութեամբ գնացին գտին զնա այրի մէջ, երկրպագեցին նմա՝
և ընծայ տուին:
- Հ. Ի՞նչ ընծայ տուին:
- Պ. Ոսկի, կնդրուկ, և զըմուռս*:
- Հ. Յետոյ Հերովդէսին հանդիպեցա՞ն մոգքն:
- Պ. Այ՛. այլ՝ ուրիշ ճանապարհաւ դարձան
գնացին յիւրեանց երկիրը:
- Հ. Ո՞վ պատուիրեց նոցա այնպէս առնել:
- Պ. Աստուծոյ հրեշտակն, որ երևեցաւ նոցա
երազի մէջ:
- Հ. Չբարկացա՞ւ Հերովդէս՝ երբ որ մոգերէն
խարեցաւ:
- Պ. Ի՞նչպէս չէ, այնպէս բարկացաւ՝ որ Ռեթ-
ղեհէմի և նորա սահմանի մէջ գտեալ մինչ
ցերկու տարեկան տղայքը ջարդել տուաւ:
- Հ. Ի՞նչ դիտաւ որութեամբ գործեց զայդ ան-
գթութիւնը:

* Վերջում է տեսակ մի անուշահոտ ազնիւ խնկոյ, Տաճկե-
րէն՝ «սուլտան» . Ռուսերէն՝ ЛИВАНЪ . և Զ՛հարս՝ է նոյնպէս
տեսակ մի անուշահոտ՝ բայց դառնահամ՝ իւղոյ կամ խնկոյ .
Տաճկ. Գորբ. Ռուս. смирна :

- Պ. Ե՛յն դիտաւորութեամբ՝ որ Յիսուս ևս նոյն տղայոց հետ սպանուի:
- Հ. Կատարեցան նորա դիտաւորութիւնն:
- Պ. Ո՛չ. վասն զի Յիսուս ազատեցաւ յայն կոտորածէն:
- Հ. Ի՛նչպէս:
- Պ. Յովսէփ զՅիսուս մօրը հետ ՚ի միասին փախոց յԱզիպտոս:
- Հ. Ո՞վ պատուիրեց Յովսէփու՝ որ այնպէս առնէ:
- Պ. Եստուծոյ հրեշտակն՝ երևելով նմա յառաջուց երազի մէջ:
- Հ. Ո՞րքան ժամանակ մնացին նոքա յԱզիպտոս:
- Պ. Մինչև ց՝ երովդէսի մեռանիլն, այսինքն՝ երկու տարի*:
- Հ. Յետոյ ո՞ւր գնացին:
- Պ. Դարձան վերստին ՚ի Նազարէթ, ուր էր նոցա առաջին բնակութիւնն: Աւ այսու պատճառաւ յետոյ Նազարէթի կոչեցաւ Յիսուս:

* Կամ ըստ այլոց կարծեաց՝ եօթն տարի:

ՅԵՒՆԼՈՒՆՕՒԲ

Ա. ՔԼՈՒԱՍՆՕՐԵԱՅ ԸՆԾԱՅՈՒՄՆ ՔՐԻՍ-
ՏՈՍԻ Ի ՏԱՃԱՐՆ:

- Հ. Ի՞նչպէս եղև ընծայումն Յիսուսի ՚ի տա-
ճարն:
- Պ. Երբ որ քառասնօրեայ եղև Յիսուս, Յով-
սէփ՝ և Մարիամ Աստուածածին՝ առին
տարան զՅիսուս ՚ի տաճարը, երկու տա-
րակ կամ երկու աղաւնի իւրեանց հա-
ուներով:
- Հ. Աղաւնի կամ տատրակ ինչո՞ւ համար տա-
րան:
- Պ. Պատարագ (շո՞) մատուցանելոյ համար,
ինչպէս հրամայուած էր Մովսիսական օ-
րինաց մէջ:
- Հ. Յերեւելի անձանց ո՞վ կայր այն ժամանակ
տաճարումը:
- Պ. Արմէօն ծերունին կայր, որ եկած էր անդ
Հոգւոյն սրբոյ ազգեցութեամբ:

Հ. Օրինչ արար նա՛ կրբ որ տեսաւ զՅիսուս:

Պ. Գիրկը առաւ զնա, փառք տուաւ Աստուծոյ, և ասաց. «Տէր, տեսի ահա աչօքս զՓրկիչը և զհեթանոսաց լոյսը. թոյլ տուր այսուհետև որ մեռանիմ»:

Հ. Աստուածածնին բան չասանց:

Պ. Ասաց զայս մարգարէական բանս. «Ահա քո այդ որդիդ շատ մարդոց (իւրեան հասարակաց) փրկութեան պատճառ պիտի լինի, և շատ մարդոց (հասարակաց)՝ կորստեան պատճառ. և ՚ի քո սիրտդ ևս սուր մտանելու է»:

Հ. Ի՞նչ կամեցաւ յայտնել «Ի քո սիրտդ սուր մտանելու է» ասելով:

Պ. Կամեցաւ յայտնել՝ թէ սիրտդ խոցուելու է սաստիկ ցաւօք՝ զորդւոյդ չարարանքը և զւրէից անհաւատութիւնը տեսանելով:

Հ. Ա՛յլ ոք ևս մարգարէաբար բան խօսող եղև յայնժամ Յիսուսի վերայ:

Պ. Ա՛յո՛, յետ Աիմէճնի՛ նաև Աննա մարգա-

բէութիւն՝ որ ութսուն և չորս տարեկան
այրի կին էր, և ՚ի տաճարէն չհեռանալով՝
գիշեր ու ցերեկ աղօթիւք և պահօք զԱս-
տուած պաշտէր, սկսաւ փառք տալ Աս-
տուծոյ, և զՅիսուսի Փրկչ լինիլը քա-
րողել:

Բ. ՎԱՐԴԱՊԵՏԵԼՆ ՅԻՍՈՒՍԻ Ի ՏԱՃԱՐԻՆ
ՅԵՐԿՈՏԱՍԱՆԱՄԵԱՅ ՀԱՍԱԿԻ:

Հ. Յիսուս ՚ի մանկութեան ժամանակին՝ իւր
Աստուածային իմաստութեան և գիտու-
թեան նշանը երևեցոյց:

Պ. Այո՞, երևեցոյց Երուսաղէմի տաճարու-
մը՝ երբ որ ինքն տան և երկու տարեկան
էր:

Հ. Ի՞նչպէս երևեցոյց:

Պ. Խօսակից լինելով Հրէից վարդապետաց
(այսինքն՝ Դուրոյ և Բէրոյ) հետ, բան
հարցանելով նոցա՝ և պատասխան տա-
լով այնպիսի իմաստութեամբ, որ լսողքն
զարմացան:

1. Որո՞ց հետ եկած էր յայնժամ Յիսուս
Ղերուսաղէմ:

Պ. Իւր մօր Մարիամու՝ և սուրբ Յովսէփայ
հետ:

1. Նոքա ինչո՞ւ համար եկած էին յայն
քաղաքը:

Պ. Տաճարումը զո՞հ մատուցանելոյ համար ՚ի
Չատկի տօնին՝ ըստ սովորութեան:

55-18507



Պ. Բ.

ՄԿԲՏՈՒԹՒՒՆ ՎՐԻՍՏՈՍ

- Ն. Յուսմէ՞ մկրտեցաւ Յիսուս:
- Պ. Ի Յովհաննէս Մկրտչէն:
- Ն. Յովհաննէս Մկրտիչն որո՞յ որդի էր:
- Պ. Օգբարիայ քահանայի կամ քահանայապետի:
- Ն. Ո՞ր բնակէր նա և որպիսի կեանք վարէր:
- Պ. Բնակէր անապատումը Ճզնաւորական կենօք:
- Ն. Ի՞նչ էր նորա կերակուրն:
- Պ. Մարտի, և վայրենի մեղր:
- Ն. Նազա՞ծ հանդերձքն և գօտին որպիսի էին:
- Պ. Նանդերձքն յուղտու բրդէ էին, և գօտին՝ հաշկեղէն էր (այսինքն՝ կաշեայ):
- Ն. Օ՞րինչ գործէր նա յանապատումը:
- Պ. Վարողէր՝ որ մարդիկ ապաշխարեն իւրեանց մեղաց համար, և զապաշխարողքը մկրտէր Յորդանան գետումը:

Երբեք

Հ. Յիսուս 'ի մեղաց սրբբւերոյ համար կամեցաւ մկրտիլ:

Պ. Այ՛. վասն զի նա սուրբ էր, և կարօտ չէր սրբբւելու:

Հ. Ուրեմն ինչո՞ւ համար մկրտեցաւ:


Պ. Օջուրը սրբելով՝ զմեր մկրտութեան խորհուրդը հաստատելոյ համար:

Հ. Ի՞նչ հրաշալի տեսիլք և դէպք եղեն Յիսուսի մկրտութեան ժամանակը:

Պ. Հողին սուրբ աղանակերպ իջաւ 'ի վերայ նորա. և յերկնից ձայն եկաւ. «Գա՛ն է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»:

Հ. Քանի՞ տարեկան էր Յիսուս երբ որ մկրտեցաւ:

Պ. Արեւուն տարեկան էր, որպէս գրէ Աւետարանիչն Գուկաս (դ. 23):



ՅԱՒԵԼՈՒՆՕ՝

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻԶ:

- Հ. Յովհաննու Մկրտչի վերայ ի՞նչ կարծիք ունեցան շրէայք:
- Պ. Կարծեցին՝ թէ նա է Մեսիայն (այսինքն՝ Վրիստոսն), որոյ համար գրած էին մարգարէքն:
- Հ. Ինքն ի՞նչ ասաց իւր համար:
- Պ. Եսաց «Ես չեմ Վրիստոսն, այլ՝ նորա Կարապետն եմ»:
- Հ. Օ, ի՞նչ նշանակէ՝ Կարապետ բառը:
- Պ. Նշանակէ՝ Յարազնիաց, (այսինքն՝ Առաջնոց քննարկ կամ Ճանապարհ քննարկ):
- Հ. Յիսուսի համար ի՞նչ ասաց:
- Պ. «Սա է, ասաց, Արդին Եստուծոյ. Սա է Վրիստոս՝ Գառն Եստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի»:
- Հ. Յովհաննէս՝ յետ մկրտելոյ զՅիսուս՝ ո՞ր զնաց, և ի՞նչ եղև:

Պ. Եւելի քան զմի տարի բանտի մէջ արգելեալ մնաց, և ապա գլխատեցաւ շերովդէս-Ննթիպասի հրամանաւ:

Ն. շերովդէս-Ննթիպաս ո՞վ էր:

Պ. Պալելիացւոց աշխարհի Չորրորդապետն էր, որդի առաջին մանկակոտոր շերովդէսի:

Ն. Ո՞վ գրգռեց զնա զայդ չար գործը գործելու:

Պ. Նորա ապօրինաւոր կինն, որոյ անունն էր շերովդիա կամ շերովդիադա:

Ն. Միթէ նա ո՞ր ունէր Յովհաննու վերայ:


Պ. Եյո՞. վասն զի Յովհաննէս ասած էր նորա համար շերովդէսին, թէ «Չէ արժան քեզ ունել զդա»:

Ն. Ո՞րք թաղեցին զՅովհաննու մարմինը:

Պ. Նորա աշակերտքն թաղեցին:

Ն. Ո՞ր տեղ:

Պ. Պաղեստինու Սեբաստէ քաղաքին մօտ:



ԳԼ . Գ

ՎԵՐՈՋՈՒԹԻՒՆԻ ՎԲԻՍՏՈՒՄ

- Հ . Յիսուս յիտ մկրտութեան ո՛ր գնաց :
- Պ . Գնաց յԵրիբովի անապատը :
- Հ . Օ՛րնչ արար այն տեղ :
- Պ . Քառասուն օր ծով պահեց , և փորձիչ սատանային յաղթեց :
- Հ . Յետոյ զի՛նչ :
- Պ . Սկսաւ աշակերտներ ժողովել , քարոզել և ուսուցանել :
- Հ . Աշակերտաց զլիաւորքն առանձին անուն ունեցան :
- Պ . Այո՛ , նոքա կոչեցան ՚ի Վրիստոսէ Առաքել :
- Հ . Օ՛րնչ նշանակէ՛ բառդ Առաքել :
- Պ . Նշանակէ՛ Ուղարկում , կամ Ուղարկել :
- Հ . Քանի՛ էին Առաքեալքն :
- Պ . Տասն և երկու :
- Հ . Ասա՛ զնոցա անուանիքը :

Պ. ան. Պատրոս:

բ. Ենդրէաս:

գ. Յակոբոս:

դ. Յովհաննէս:

ե. Փիլիպպոս:

զ. Բարթոլոմէոս:

է. Թովմաս:

ը. Մատթէոս:

թ. Յակոբոս Ելփեան:

ժ. Ղեբէոս (որ և Թադէոս):

ժան. Սիմոն Կանանացի:

ժբ. Յուդա Իսկարիովտացի:

չ. Յիսուս զինչ քարոզէր:

Պ. Քարոզէր՝ որ մարդիկ հաւատան իւրեան, ապաշխարեն, և առաքինութիւնք գործեն, զերկնից արքայութիւնը կամ զյաւիտեանական կեանքը ժառանգելոյ համար:


չ. Որպիսի առաքինութիւնք ուսոյց Յիսուս:

Պ. Ղշմարտութիւն սիրել, սուրբ սրտիւ զԵստուած ճանաչել և հողով պաշտել, հեզ՝ խոնարհ՝ համբերող՝ ողորմած՝ խա-

ղաղարար՝ եղբայրասէր կամ ընկերասէր
լինել, և այլն:

Ը. Այլ որպիսի խրատներ տուաւ:

Պ. Օգուշանալ յայն ամենայն ախտից և ՚ի
մոլութեանց՝ որք կարեն հոգւոյ կորստեան
պատճառ լինել, որպիսի են կեղծաւորու-
թիւն, հպարտութիւն, ռխախակալուի,
ստախօսութիւն, և այլն:



ԳԼ Գ

ՀՐԵՇ ԱԳՈՐԾՈՒԹԻՒՒՆՆԵՐ ԳՐԻՍՏՈՍԻ

- Հ. Յիսուս զօրակախ հրաշքներ գործեց:
- Պ. Հիւանդները և ցաւագարները բժշկեց. դիւահարները ազատեց. խլից ականջները և համր մարդոց լեզուները բացաւ. կուրաց աչքերը լուսաւորեց. կաղերը և անդամալոյծները առողջացոյց. և այլն:
- Հ. Դեղ ՚ի գործ ածէր Յիսուս՝ բժշկութիւն կատարելոյ ժամանակին:
- Պ. Ոչ. այլ՝ միայն իւր Աստուածային կարողութեամբ և հրամանաւ բժշկէր հրաշապէս:
- Հ. Յիսուսի հրաշագործութեանց առաջինն զորն եղև:
- Պ. Օջուրը ՚ի գինի փոխելն:
- Հ. Յո՞ր տեղ և երբ եղև այդ հրաշագործութիւնդ:
- Պ. Աննա Գալիլիացւոց ասացեալ քաղաքու-

մը՝ երբ որ Յիսուս մօրը հետ ՚ի միասին
հարսանեաց մէջ նստած էր:

Ն. Ի՞նչպէս եղև:

Պ. Հարսանեաց ուրախութեան ժամանակը
զինին պակասեցաւ. Մարիամ յայտնեց
Յիսուսին՝ թէ գինի չունին: Յիսուս ևս
պատուիրեց սեղանի սպասաւորաց՝ որ քա-
րեայ ջրամանները ջրով լնուն և տանին
տաճարապետին* : Աւերբ նոքա կատարե-
ցին զայս, տաճարապետն ճաշակելով՝ տե-
սաւ որ պատուական անոյշ գինի եղած է:

Ն. Քանի՞ հատ էին այն ամանքն, և որչափ
գինի կամ ջուր կարէին պարունակել:

Պ. Այն հատ էին, և իւրաքանչիւրն երկու
կամ երեք մար** կարող էր պարունակել:

Ն. Այլ կերպ հրաշքներ ևս գործեց Յիսուս:

Պ. Այո՛. զճովու կատաղած ալքըր՝ և զսաս-
տիկ հողմը՝ մի խօսքով դադարեցոյց. ծո-
վու վերայ ոտիւք քայլեց. և երկու անգամ

* Տօճարապետ՝ նշանակէ աստ՝ Սեղանի վերակոչում:

** Մար՝ չափ է ըմպելի կամ հեղուկ նիւթոց:

Լս սահաւ հաց ու ձուկը բազմացոյց՝ օրհնելով:

Է. Յառաջին անգամին զքանի՞ հացը և ըզքանի՞ ձուկը բազմացոյց:

Պ. Օ հինգ գարեղէն հացը, և զերկու ձուկը:

Է. Քանի՞ մարդ կերան յայն հացերէն և ձրկներէն:

Պ. Հինգ հազար մարդ՝ բաց ՚ի կանանց և ՚ի փոքր տղայոց:

Է. Կարացի՞ն կշտանալ:

Պ. Ե՛յո՛ւ. այնպէս կշտացան, որ տանն և երկու սահառի ևս հացի փշրանք վերուցին:

Է. Յերկրորդ անգամին զքանի՞ հացը և ըզքանի՞ ձուկը բազմացոյց:

Պ. Օ եօթն հացը և զքանի մի ձուկը:

Է. Քանի՞ հոգի կերան կշտացան յայն հացերէն և ձկներէն:

Պ. Չորս հազար հոգի՝ բաց ՚ի կանանց և ՚ի փոքր տղայոց:

Է. Որքան հացի փշրանք յաւելացան:

Պ. Եօթն զամբիւղ լի:

Է. Մեռած մարդ ևս յարոյց Յիսուս:

- Պ. Ե՛ր, երեք ևս մեռած մարդ յարոյց:
- Հ. Ո՞վ էր այն մեռածների առաջինն:
- Պ. Յայրոս իշխանին Հրէից տասն և երկու տարեկան աղջիկն էր, Ասիաունայում քաղաքումը:
- Հ. Ո՞վ էր երկրորդն:
- Պ. Մի այրի կնոջ մի հատիկ որդին էր, Նային քաղաքումը:
- Հ. Երրորդն ո՞վ էր:
- Պ. Ղազարոսն էր՝ Յիսուսի բարեկամն, Բեթանիա գիւղումը:
- Հ. Ի՞նչպէս յարոյց Յիսուս զՅայրոսի աղջիկը:
- Պ. Բռնեց ձեռքէն, և ասաց Նբրայեցերէն «Տալի՜թա, կ'ու՛մի»:
- Հ. Ե՛ր խօսքդ զի՛նչ թարգմանի:
- Պ. Թարգմանի «Եղջիկ դու, քեզ ասե՛մ՝ արի՛ (վեր կաց)»:
- Հ. Ի՞նչպէս յարոյց զայրի կնոջ որդին:
- Պ. Երբ որ տանէին զնա թաղելու, մօտեցաւ Յիսուս դագաղին, և ասաց «Պատանի՛ դու, քեզ ասե՛մ՝ արի՛», և խկոյն կանգ-

նեցաւ նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել:

Ն. Օ՛հ, ազարը երբ յարոյց Յիսուս:

Պ. Երբ որ նա չորս օրուան մեռած էր և թաղուած:

Ն. Ի՞նչպէս յարոյց:

Պ. Յետ գնալոյ ՚ի գերեզմանն Ղազարու, աղաղակեց բարձր ձայնիւ «Ղազարէ, արի՛ եկ արտաքս» . և իսկոյն կենդանացաւ մեռեալն, և ինքնին դուրս ելաւ ՚ի գերեզմանէն:

Ն. Պատանքով պատած չէ՞ր նա:

Պ. Պատած էր. ուստի հրամայեց Յիսուս՝ որ ոտից և ձեռաց կապանքը արձակեն:



ՅԵՒՆԼՈՒՆՕՒԹ

Ա. ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

- Ն. Յիսուս՝ յառաջ քան զյարութիւնն՝ որպիսի տեսիլքով երևեցոյց զիւր Աստուածային փառքը:
- Պ. Այլակերպելով, այսինքն՝ զիւր կերպարանքը փոխելով:
- Ն. Յոր տեղ:
- Պ. Թաքօր լերան վերայ:
- Ն. Որ Առաքելոց առաջևը:
- Պ. Պետրոսի, Յակոբու, և Յովհաննու:
- Ն. Ինչպէս այլակերպեցաւ:
- Պ. Երեսն պայծառացան լուսաւորեցան արևու նման, և հանդերձքն եղին ձիւնի նրման սպիտակ և փայլուն:
- Ն. Այն տեսիլքի մէջ այլ մարդիկ ևս երևեցա՞ն:

Պ. Այո՛, Մովսէս և Ադիա մարգարէքն երևեցան:

Հ. Առաքելոց հետ խօսեցան նորա:

Պ. Ո՛չ. այլ՝ միայն Յիսուսի հետ խօսեցան նորա չարչարանաց և մահուան վերայ:

Հ. Յետոյ ի՞նչ եղև:

Պ. Առաքելոց ամպ իջանելով՝ հովանի եղև նոցա, և յերկնից ձայն եկաւ. «Գա՛ն է որդի իմ ընտրեալ, դմն լուարուք»:

Հ. Առաքելաւքն չվախեցան յայն ձայնէն:

Պ. Այնպէս վախեցան՝ որ իսկոյն երես ՚ի վայր անկան. բայց Յիսուս քաջալերեց զնոսա՝ ասելով. «Յո՛ւսն կացէք, և մի՛ երկնչիք»:

Բ. ԹՇՆԱՄԻՔ ՅԻՍՈՒՍԻ:

Հ. Յիսուս թշնամիք ևս ունէր:

Պ. Այո՛, թշնամիք էին նմա շրէից դպիրքն, Փարիսեցիքն, քահանայքն, աշխարհասէր իշխանքն, և ծերքն:

Հ. Ո՞րք էին դպիրքն:

Պ. Հրէից օրինագէտքն էին, որք և կոչէին
Օրէնաւոր, կամ Վարդապետ, օրէնաց:

Զ. Ո՞՞ք էին Փարիսեցիքն:

Պ. Փարիսեցի կոչէին այն աղանդաւոր Հրէ-
րէայքն, որք ՚ի հասարակ ժողովրդէն բա-
ժանուած էին՝ ոչ միայն զգեստիւք (շորե-
լով), այլ և զանազան սովորութեամբք:

Զ. Առաքինի՞ մարդիկ էին նորա:

Պ. Ո՞չ. այլ՝ կեղծաւոր՝ հպարտ՝ ազահ՝ խա-
բեբայ՝ մարմնասէր՝ փառասէր և թիրա-
հաւատ մարդիկ էին. բայց քան զայլս օրի-
նապահք էին համարուամ:

Զ. Այլի՞ն Հրէից ժողովրդի մէջ և հետե-
ւորք Յիսուսի:

Պ. Այո՛, կային և շատ բարեմիտ և ճշմար-
տասէր անձինք, որք լսելով զՅիսուսի քա-
րոզութիւնքը՝ և տեսանելով զնորա հրա-
շագործութիւնքը՝ հետեւէին նմա սիրով,
և ցանկային փառաւորել և հռչակել զնորա
անունը:

Գ. ՀԱՆԳԻՍԱՒՈՐ ՄՈՒՏ ԲՐԻՍՏՈՍԻ ՅԵՐՈՒՍԱԳԷՄ

Ն. Երբ առաւել հռչակեցաւ Յիսուսի ա-
նունն շրէից մէջ:


Պ. Երբ որ իշոյ և յաւանակի վերայ նստած՝
յերուսաղէմ մտաւ:

Ն. Ի՞նչպէս եղև այդ:

Պ. Ժողովուրդն երբ որ լսեցին՝ թէ Յիսուս
գայ, արմաւենւոյ և ձիթենւոյ ոստեր ձեռ-
քերնին բռնած՝ ընդ առաջ ելին, և հան-
դերձնին ճանապարհի վերայ տարածելով՝
սկսան ամենքն՝ թէ՛ ձեր և թէ՛ տղայ՝ ըս-
տէս ստէս աղաղակել. «Ովսաննա՛ ի բար-
ձունս. Ովսաննա Որդւոյ Գաւթի, օրհ-
նեսդ որ գասդ յանուն Տեառն, Թաղաւո-
րըդ Իսրայէլ»:

Ն. Օրհնչ նշանակէ՛ Ովսաննա բառդ:

Պ. Յերբայեցւոց լեզուի նշանակէ՛ Փռիւն կամ
կէց՝ շիւղ, և կամ՝ Փռիւն-իւն-ի Բարձանց:



ԳԼ . Ե

ՉԵՐՉԵՐԵՆՔ, ՄԵՀ, ԵՒ ԹԵՂՈՒՄՆ
ՔՐԻՍՏՈՍԻ :

- Հ . Յիսուս՝ իւր չարչարանաց և մահուան
համար յառաջագոյն բան ասանց աշակեր-
տացն :
- Պ . Ե՛յ՛ . «Գիտէ՞ք ասաց, յետ երկուց ա-
ւուրց Զատիկ լինի, և Որդի մարդոյ մատ-
նի 'ի խաչ ելանել » :
- Հ . Եղև՞ այդ :
- Պ . Ե՛յ՛ . վասն զի Յիսուսի թշնամիքն՝ Աա-
յիափա քահանայապետի սրահում ժո-
ղովուելով, խորհուրդ արարին որ բռնեն
զՅիսուս և սպանանեն :
- Հ . Ո՞վ մատնեց կամ բռնել տուաւ զՅիսուս :
- Պ . Յուդա Սիմոնեան Իսկարիովտացին, որ
Յիւսուսի տանն և երկու գլխաւոր աշա-
կերտաց մինն էր :
- Հ . Յուդայի այդպիսի ապերախտութեան
պատճառն ի՞նչ էր :

Պ. Իւր ազահուլթիւնն կամ արծաթսիրուլթիւնն:

Հ. Ուրեմն Յիսուսի թշնամիքն փող խոստացած էին Յուդայի:

Պ. Այո՛. խոստացած էին երեսուն արծաթ տալ, և տուին:

Հ. Գիտէ՞ր Յիսուս՝ որ Յուդա մատնելու է զինքն:

Պ. Գիտէր, և աշակերտաց ևս յայտնեց առանց անուն տայոյ:

Հ. Ի՞նչպէս:

Պ. «Չէր միջէն, ասաց, մինն մատնելու է զիս»:

Հ. Երբ ասաց զայդ բանդ:

Պ. Հրէից Պասքայի (այսինքն՝ Ջորջ) յառաջին երեկոյին՝ երբ ինքն ՚ի սեղան նըստած էր տասն և երկու աշակերտօքն:

Հ. Աշակերտքն չցանկացան իմանալ՝ թէ ո՞վ պիտի լինի մատնիչ:

Պ. Ցանկացան. Յովհաննէս՝ որ նստած էր Յիսուսի մօտ, ըստ ակնարկելոյն Պետրոսի հարցոյց «Տէր, ո՞վ է»:

- Հ. Ի՞նչ պատասխան տուաւ նմա Յիսուս:
- Պ. «Ո՞ւմ որ պատառը թաթախեմ՝ տամ, ասաց, նա է»:
- Հ. Ո՞ւմ տուաւ զպատառը:
- Պ. Յուդային տուաւ՝ ասելով «Գնա՛ այժմ, ինչ որ պիտի առնես՝ արա՛ շուտով»:
- Հ. Գնա՞ց այն ժամանակ Յուդա:
- Պ. Եւ յի, զնաց ուղղակի քահանայապետից՝ դպրաց և իշխանաց մօտ, և խոստացաւ նոցա մատնել զԷւր վարդապետը:
- Հ. Եւ յուհեաւ զի՞նչ արար Յիսուս:
- Պ. Սկսաւ զԷւր վերջին պատուիրանքները տալ աշակերտաց, և ապա Գեթսեմանոյ պարտիզումը առանձնանալով՝ աղօթել:
- Հ. Ի՞նչպէս կատարեց Յուդա զԷւր չար կամքը:
- Պ. Ահա զիշերին շրէից ամբոխի և շուովմայիցի զօրականաց հետ եկաւ յայն պարտէզը՝ ուր էր Յիսուս, և բռնել տուաւ զնա:
- Հ. Ի՞նչ նշանաւ կարացին ճանաչել զՅիսուս:

Պ. Յուդայի ցուցած նշանաւ, որովհետեւ նա ստած էր նոցա թէ «Ում հետ որ ես համբուրուիմ՝ նա է Յիսուան, բռնեցէք և տարէք զգուշութեամբ»:

Է. Երբ որ Յուդա համբուրեց զՅիսուս, Յիսուս ի՞նչ ասաց նմա:

Պ. «Յուդա, ասաց, զու զիս համբուրելով մատնես»:

Է. Յուդա չզղջացաւ իւր գործած անօրէնութեան վերայ:

Պ. Օղջացաւ, բայց ո՛չ ՚ի սրտէ, և առած արծաթը դարձոյց քահանայապետից և ծերոց՝ ասելով. «Մեղանչեցի ես՝ որ արդար արիւն մատնեցի»:

Է. Ի՞նչ պատասխան տուին նմա քահանայապետքն:

Պ. «Դու՛ զիտես, ասացին, այդ մեզ փոյթ չէ»:

Է. Թողութիւն խնդրեց Յուդա ՚ի Յիսուսէ:

Պ. Ո՛չ. այլ բոլորովին յուսահատած, յետ ձգելոյ բարկութեամբ զարծաթը տաճարի մէջ, գնաց ինքը զինքը կախեց, և կորեաւ հողով և մարմնով:

- Հ. Քահանայապետքն առի՞ն զայն արծաթը:
- Պ. Եռին, բայց որովհետև արեան զին էր՝ արժան չհամարելով տաճարի կորբանը (գանձանակը) ընդունել, զնեցին այնու մի փոքրիկ՝ բրտի ագարակ՝ օտարականաց գերեզմանատեղի շինելոյ համար*:
- Հ. Երբ որ զՅիսուս բռնելու եկին, աշակերտքըն զի՞նչ արարին:
- Պ. Կամեցան կռուել թշնամեաց հետ. Պետրոս ևս զարկաւ կտրեց սրով զՄաղքոսի աջ ախանջը:
- Հ. Յիսուս յօժար էր այդպիսի վրէժխնդրութեան:
- Պ. Ո՛չ. ուստի ասաց Պետրոսին. «Սուրդ տեղը դիր: Մի՛թէ դու այնպէս ես կարծում՝ թէ ես կարող չեմ աղաչել իմ Հօրս՝ որ հրեշտակներ հասուցանէ ինձ աւելի քան զտասն և երկու դունդ»:
- Հ. Մաղքոսն ո՞վ էր:

* Այս տեղս կոչուեցաւ այնուհետև Ասորոց լեզուաւ Ալիզրա՛օ, որ թարգմանի Գիօզ արեան (Գործ. ան. 19):

- Պ. Այլիափա քահանայապետի ծառայն էր :
- Հ. Կորա ականջն կտրած մնաց :
- Պ. Ո՛չ. վասն զի Յիսուս իսկոյն բժշկեց :
- Հ. Ո՛ւր տարան զՅիսուս յետ բռնելոյ :
- Պ. Տարան նախ Եննա քահանայապետի՝ և ապա Այլիափա քահանայապետի՝ յատենանր՝ որ դատուի :
- Հ. Յիսուսի աշակերտքն ի՞նչ եղևն :
- Պ. Փախեան ցրուեցան. միայն Պետրոս և և Յովհաննէս Յիսուսի ետեւէն գնացին, և մտին ՚ի դաւիթն Այլիափա քահանայապետի :
- Հ. Եւ յնժամանակը որպիսի փորձութիւն պատահեցաւ Պետրոսին :
- Պ. Յառաջ քան զերկրորդ շաւախօսը՝ երեք անգամ ուրացաւ զՅիսուս՝ ո՛չ ՚ի սրտէ, այլ միայն լեզուաւ, և առ երկիւղի :
- Հ. Ի՞նչպէս եղև այդ :
- Պ. Երբ որ դռնապան աղջիկն և այլք ևս հետ զհետէ հարցուցին նմա՝ թէ «Վ՛ո՞ւ ևս յաշակերտաց Յիսուսի ես», նա ուրացաւ երգմամբ, և ասաց «Չեմ ՚ի նոցանէ, ո՛չ

գիտեմ զայրն» :

- Է. Յետոյ քաւեցան նա յայդ մեղացդ :
- Պ. Այո. վասն զի ճանաչեց զիւր յանցանքը, զղջացաւ 'ի սրտէ, և արտասուեց դառնապէս :
- Ը. Այլիափայի տան մէջ ո՞րքան ժամանակ մնաց Յիսուս :
- Պ. Ո՞րչէ զիշերը այն տեղ պահեցին զնա զինուորքն և քահանայապետի սպասաւորքն, և շատ չարչարեցին՝ երեսին թքնելով, ասպտակելով, ծաղը առնելով, և այլն :
- Թ. Յառաւօտուն ո՞ւր տարան :
- Պ. Պոնտացի Պիղատոսի մօտ՝ սպանանելոյ հրաման առնելոյ համար :
- Ժ. Պիղատոս ո՞վ էր :
- Պ. Ղատաւոր էր Հրէաստանի՝ Հռովմայեցւոց կողմանէ դրուած :
- Ի. Նա շուտով հրաման տուան զՅիսուս սպանանելու :
- Պ. Ո՞չ. վասն զի քննեց իմացաւ՝ որ Յիսուս անմեղ է. բայց ուղարկեց զնա Հերովդէսի մօտ՝ որ նա ևս զնորա յանցանքը քննէ, կամ վճիռ տայ նորա համար :

- Ն. Ներովդէս զԸ՛նչ արար:
- Պ. Յիսուսին քանի մի բան հարցոյց, և կամեցաւ ևս՝ որ նա իւր առաջն նշան (հրաշ) գործէ:
- Ն. Աստարեց Յիսուս զնորա կամքը:
- Պ. Ո՛չ. վասն զի ո՛չ հրաշք գործեց և ո՛չ հարցմանցն պատասխան տուաւ:
- Ն. Յետոյ:
- Պ. Ներովդէս բարկանալով Յիսուսի լուծեան համար, վերայն սպիտակ վերարկու ձգել տուաւ, և ուղարկեց դարձեալ Պիղատոսի մօտ:
- Ն. Պիղատոս այնուհետեւ ևս չաշխատեցա՛ն զՅիսուս արձակելու:
- Պ. Շատ աշխատեցաւ, բայց անօգուտ եղն նորա աշխատանքն:
- Ն. Այն է՛ր:
- Պ. Այն այն՝ որ Յիսուսի թշնամիքն այնպէս կատաղած էին, որ ամենքն միաբերան ազաղակէին. «Բարձ՛ի մէնջ, բարձ՛ի մէնջ, և հան զգա ՚ի խաչ»:
- Ն. Երբ որ զայդ լսեց Պիղատոս՝ զԸ՛նչ արար:

- Պ. Քուր բերել տուաւ, և բաղմութեան առաջն լուաց ըզձեռքերը՝ ասելով «Բաւեալ եմ ես յայդ արդար մարդոյ արիւնէն:
- Հ. Հրէայք զի՞նչ պատասխանեցին:
- Պ. Պատասխանեցին թէ «Գորա արիւնն՝ մեր և մեր որդւոց վերայ թող լինի»:
- Հ. Ուրեմն Պիղատոս կատարեց զնոցա կամքը:
- Պ. Եւ յի, վասն զի տուաւ ՚ի ձեռս նոցա ըզՅիսուս՝ որ խաչեն:
- Հ. Յո՞ր տեղ խաչեցին զՅիսուս:
- Պ. Գողգոթա ասացեալ փոքրիկ սարի վերայ, որ Երուսաղէմ քաղաքի յԱրեմտեան կողմն է:
- Հ. ՔՅիսուսի խաչը ո՞վ տարաւ ՚ի Գողգոթա:
- Պ. Մինչև ՚ի քաղաքի դուռը Յիսուս ինքն տարաւ՝ իւր ուսի վերայ բարձաճ ունեւ լով. յետոյ առին Աիմոն-Ալւրենացոյն* տուին՝ որ նստանի:

* Սա Հրէայէք, այլ Հեթանոս (տորապէս) և պանդուխտ, որ այն ժամանակ յիւր ազարակէն ՚ի քաղաքն գայր (Մարկ. Ժ. 21):

- Հ. Ի՞նչ էր պատճառն որ այդպէս արարին:
- Պ. Այն էր որ վախեցան, մի՞ գուցէ Յիսուս չհաչուած՝ ՚ի ճանապարհին մեռանի:
- Հ. Ա՛յլ մարդիկ ևս խաչեցի՞ն Յիսուսի հետ:
- Պ. Այո՛, երկու մարդ ևս խաչեցին, զմինք Յիսուսի մի կողմը, և զմիւսը՝ միւս կողմը:
- Հ. Ի՞նչպէս մարդիկ էին նոքա:
- Պ. Երկուքն ևս չարագործ աւազակներ էին. բայց մինն՝ որ Յիսուսի յաջ կողմն էր՝ Արքայութեան արժանի եղև:
- Հ. Ի՞նչպէս:
- Պ. Երբ որ միւս ընկերն (այսինքն՝ ձախակողմեան աւազակն) նախատէր և հայհոյէր զՅիսուս, սա յանդիմանեց զնա. և Յիսուսի Աստուածութեանը հաւատարով, և դաւանելով զնա՝ երկնային և յաւիտեանական թագաւոր, ասաց «Յիշեա՛ զես Տէր՝ յորժամ՝ գայցես արքայութեամբքով»: Եւ Յիսուս ասաց նմա. «Ամէն ասեմ՝ քեզ, այսօր ընդ իս իցես ՚ի Վերալատին*»:

* Այսինքն՝ Արքայութեան երկնից:

- Ն. Չախակողմեան աւազակն որպիսի խօսքով նախատեց և հայհոյեց զՅիսուս :
- Պ. «Ո՞չ դու ես՝ ասաց՝ Վրիստոնն. փրկեան զանձն քո և զմեզ » :
- Ն. Երբ որ զՅիսուս խաչեցին, զնորա հանդերձքը զի՞նչ արարին :
- Պ. Չորս զինուորք առին բաժանեցին իւրեանց մէջ՝ չորս մասն առնելով. բայց պատմուճանին վերայ առանձին վիճակ ձգեցին :
- Ն. Ի՞նչ պատճառաւ առանձին վիճակարկութիւն եղև պատմուճանին վերայ :
- Պ. Ե՛յն պատճառաւ՝ որ վերուստ ՚ի վայր հիւսուած էր այն պատմուճանն՝ առանց կարի, և չէր կարելի առանց պատառելոյ բաժանել զայն :
- Ն. Յիսուսի խաչին վերայ ի՞նչ էր գրուած :
- Պ. Պիղատոս գրել տուած էր զայս բանս. «Յիսուս Նազովընցի Թագաւոր շրէից» :
- Ն. Ո՞ր ազգի լեզուաւ և գրով :
- Պ. Եբրայեցերէն, Վաղմատերէն (այսինքն՝ Լատիներէն), և Յունարէն :

Հ. Յիսուսի այլ ի՞նչ չարչարանք տուին՝
խաչի վերայ եղած ժամանակը:

Պ. Երբ որ «Տարաւի՛ եմ» ասաց Յիսուս,
ջրոյ տեղ՝ քացակս տուին նմա՝ լեղևով
խառնած:

Հ. Յիսուս ի՞նչպէս աւանդեց զԵւր հոգին:

Պ. Գոչելով բարձրաձայն առ Հայրն Աս-
տուած. «Հայր, ՚ի ձեռս քո աւանդեմ
զհոգի իմ»:

Հ. Յառաջ քան զմահն որպիսի սքանչելիք
եղեն՝ ՚ի նշան նորա Աստուածութեան և
անմեղութեան:

Պ. Երեզակն խաւարեցաւ՝ արտաքոյ բնական
կարգի, որով և խաւար եղև երկրի վերայ
ի վեցերորդ ժամէն մինչ ցիւններորդ ժամն:

Հ. Յետ մահուանն ևս եղե՞ն այլ նոր սքան-
չելիք.

Պ. Այո՛, երբ որ նա զհոգին աւանդեց, նոյն
ժամայն սաստիկ գետնաշարժութիւն եղև.
ապառաժ քարեր ճեղքուեցան, և տաճա-

րի վարագոյրն ինքնին պատառուեցաւ վե-
րէն մինչ 'ի վայր:

Ն. Այլ ի՞նչ:

Պ. Երբ որ զինուորաց մինն ծակեց աիգով
(*բեղարդով*) զՅիսուսի կողը, արիւն և
ջուր ելաւ:

Ն. Օ, արեգական խաւարումնը՝ վասն էր ու-
րաւոյ բնական կարգի ասացեր:

Պ. Այսն այն՝ որ այն ժամանակ լուսնի լը-
րումն լինելով՝ արեգական խաւարման ժա-
մանակ չէր*:


Ն. Երբ եղև Յիսուսի թաղումն:

Պ. Նոյն իսկ մահուան օրում (*այսինքն՝
Պարբաթ օրն*), յառաջ քան զարեգակ-
նամուտը:

Ն. Ո՞րք իջուցին 'ի խաչէն զՅիսուսի մարմի-
նը:

* Վասն զի արեգական խաւարումն բնականապէս 'ի լուսնի
ճննդեանն պատահի:

- Պ. Յովսէփ Արեմաթացին, և Նիկողեմոս,
որք Հրէից իշխանք էին, և ծածուկ աշա-
կերտք Յիսուսի:
- Հ. Ուր թաղեցին:
- Պ. Մերձակայ պարտիզումը, մի նորափոր
քարեայ զերեզմանի մէջ, զոր Յովսէփ Ա-
րեմաթացին իւր համար պատրաստել
տուած էր:
- Հ. Հրէայք յետ Յիսուսի թաղման զի՞նչ
զգուշութիւն արարին:
- Պ. Ի միւս օրն (որ էր Շաբաթ) պահապան
զինուորներ զրին՝ զզերեզմանը պահելոյ
համար, և զզերեզմանի դրան քարը կրն-
քեցին:
- Հ. Ի՞նչու համար զայդ արարին:
- Պ. Այնոր համար՝ որ չլինի թէ զմարմինը
գողանան, և համբաւ տարածուի՝ թէ յա-
րուցեալ է*:



* Վասն զի Յիսուս յառաջուց ասած էր՝ թէ ՚Յետ երեց
աւուրց յառնեմ' (Մատ. իէ. 62):

ՅԵՒՆԼՈՒՆԾԻՔ

Ա. ՍԱՀՄԱՆՈՒԹՄԱՆ ԽՈՐՀՐԳՈՅ ՀԱԳՈՐԳՈՒԹԵԱՆ:

Հ. Յիսուս յիւր մասնութեան զիշերին զե՞նչ նոր խորհուրդ սահմանեց:

Պ. Սահմանեց զհաղորդութեան (այսինքն՝ շրայրայրէի) խորհուրդը. որով զիւր մարմինը և արիւնը տուաւ աշակերտաց:

Հ. Ի՞նչպէս տուաւ զմարմինը:

Պ. Առաւ հաց՝ * օրհնեց՝ կտրեց՝ և աշակերտաց տուաւ՝ ասելով «Առէ՛ք կերէ՛ք, այս է մարմին իմ»:

Հ. Օրիւնը ի՞նչպէս տուաւ:

Պ. Առաւ բաժակ՝ ** օրհնեց՝ և տուաւ ա-

* Այսինքն՝ քաղաքի հաց. վասն զի առաջին օրն էր Բաղարջակերաց (Մատ. ինչ . 17). և օրէն էր շրեկից՝ եօթն օր բաղարջ ուտել, և խմորուն հաց չպահել տան մէջ մինչ ց21 օրն նոյն ամսոյ, որ էր նիսան (Եւ. ժի. 18—20):

** Այսինքն՝ փայն գինի՝ բաժակի (քոստիկ) մէջ:

շակերտաց՝ ասելով «Արքէք ՚ի դմանէ
ամենեքին, այդ է արինն իմ»:

Հ. Պատուիրեց աշակերտաց՝ որ նորա ևս
զնոյն խորհուրդը կատարեն:

Պ. Այո՛, պատուիրեց՝ և իշխանութիւն ևս
տուաւ նոցա՝ զնոյն խորհուրդը կատարե-
լու ըստ այնմ օրինակի. «Չայց արա-
րէք, ասաց, առ իմոյ յիշատակի*»:

Բ. ՈՏՆԼՈՒԱՅ:

Հ. Այլ ի՞նչ արար Յիսուս աշակերտացն ՚ի
մատնութեան գիշերին:

Պ. Յետ ուտելոյ զՕտակական ընթրիքը և
յառաջ քան զՊատարագի խորհուրդը
սահմանելն՝ զաշակերտաց ոտքերը լուաց:

Հ. Ի՞նչպէս:

Պ. Յարեաւ (վեր կոչուած) սեղանէն, զենջակ
կապեց մէջքին, ջուր լցոյց կոնքի մէջ, և

* Այսինքն՝ «կատարեցէք և դուք զայս խորհուրդս այս-
պէս՝ յիշելոյ համար զիս և զիմ մարմնոյս արինաւոր պատար-
ագը՝ զոր պիտի տեսանէք խաչի վերայ»:

սկսաւ մի մի վաշակերտաց ոտքերը լուանալ և զինջակովն սրբել*:

- Է. Ինչո՞ւ համար արար Յիսուս զայդ գործը:
- Պ. Խոնարհութեան օրինակ ցուցանելոյ համար իւր աշակերտացն և ամենայն հետեւողացն:
- Ը. Յետ զայդ առնելոյ՝ զի՞նչ ատաց աշակերտացն:
- Պ. « Եթէ ես, ասաց, Տէրս և Վարդապետս զձեր ոտքերը լուացի, ապա՞ դուք ևս պարտաւիք զվիմեանց ոտքերը լուանալ »:




* Պետրոս ՚ի սկզբան չկամեցաւ թոյլ տալ՝ որ Յիսուս զիւր ոտքերը լուանայ. բայց ապա՝ երբ որ լսեց ՚ի Յիսուսէ զայս խօսքս, « Եթէ ոչ լուացից դքեզ, ոչ ունիս ընդ իս մասն », թոյլ տուաւ՝ ասելով, « Տէր, մի միայն զոտս ի՞ր, այլ և զձեռս և զգլուխ » (Յովհ. ԺԳ. 6—9):

ԳՎ. Օ.

ՅԵՐՈՒԹՒԻՒՆ ԿՐԻՍՏՈՍԻ

- Հ. Յիսուս երբ յարեաւ :
- Պ. Յերրորդ օրն յետ մահուան, այսինքն՝
'ի Շաբաթու գիշերին դէպ 'ի լոյս Միաշաբաթու, որ է Վերսկի :
- Հ. Գերեզմանի պահապանքն ի՞նչ եղևն :
- Պ. Եւ յալէս վախեցան սարսափեցան՝ որ մեռելանման գետնի վերայ անկան :
- Հ. Ո՞վ վախեցոյց զնոսա :
- Պ. Հրեշտակն, որ յանկարծ ահաւոր լուսափայլութեամբ յերկնից իջանելով՝ զգերեզմանի դրան քարը զլորեց, և նստաւ նորա վերայ :
- Հ. Յիսուսի յարութեան համբաւն շոյոտ տարածեցաւ :
- Պ. Եւ յի՛ վասն զի ոմանք 'ի պահապանացն գնացին շուտով 'ի քաղաք, և պատմեցին քահանայապետից ինչ որ պատահած էր :

- Ն. Քահանայապետքն զԸնչ արարին՝ երբ որ զՅիսուսի յարութեան լուրը առին:
- Պ. Երբ յողովորեան ծերերի հետ խորհուրդ առնելով՝ շատ փող տուին այն պահապանաց, և պատուիրեցին ասել՝ Թէ Յիսուսի աշակերտքն զիշերով գալով՝ գողացան զմարմինը՝ երբ ինքեանք քնած էին:
- Ն. Յետ յարութեան որոց երևեցաւ Յիսուս:
- Պ. Նախ՝ Մարիամու Մագդաղենացոյ, ապա այլոց Իւղաբեր կանանց, և ապա շատ անգամ ևս իւր աշակերտաց՝ ՚ի զանազան տեղիս և ՚ի զանազան ժամանակս մինչև ցհամբարձումն իւր յերկինս:
- Ն. Աշակերտաց զԸնչ պատուէր տուաւ ՚ի վերջին երևմանն:
- Պ. Պատուիրեց նոցա՝ երթալ յամենայն աշխարհ, քարոզել զԱւետարանը, և զհաւատացեալքը մկրտել յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սբ. ուսուցանելով նոցա պահել ինչ որ ինքն պատուիրած էր:



ԳԼ Է

ՀԱՄԻՆԵՐՉՈՒՄՆ ՎԲԻՍՏՈՍԻ

- Հ. Յիսուս երբ համբարձաւ յերկինս :
- Պ. Ի քառասներորդ օրն՝ յետ յարութեան, որ էր Հինգշաբթի :
- Հ. Յոր տեղէ համբարձաւ :
- Պ. Ի Չիթենեաց լեռնէն, որ մօտ է Արուսաղէսի և Բեթանիայի :
- Հ. Ո՞րք տեսին զՅիսուսի համբառնայլը :
- Պ. Նորա ամենայն աշակերտքն, և նոցա հետ ՚ի միասին՝ այլ ևս հաւատացեալք աւելի քան զհինգ հարիւր :
- Հ. Օ՞րնչ խոստացաւ նոցա Յիսուս յառաջ քան զմեկնիցն ՚ի նոցանէ :
- Պ. Խոստացաւ առաքել զՀոգին սուրբ՝ որ զնոսա մխիթարէ և զօրացուցանէ, և ըզնոցա միտքը լուսաւորէ :
- Հ. Ո՞րպէս եղև Յիսուսի համբարձումն :
- Պ. Յիսուս զիւր աշակերտները առաւ տաւրաւ ՚ի Չիթենեաց լեռան, և յետ օրհնե-

լոյ զնոսա անդ՝ վերացաւ յերկինս, և ամշ
պով ծածկուելով՝ եղև աներևոյթ:

Է. Այլ ի՛նչ տեսիլք եղև յայնժամ անդ:

Պ. Երբ որ աշակերտքն և այլ հաւատացելոց
բազմութիւնն անթարթ աչօք հայէին
նորա յերկինս երթալուն, երևեցան նոցա
յանկարծ երկու հրեշտակք՝ մարդոց կեր-
պարանաւ՝ սպիտակ շորեր հագած:

Է. Աշակերտաց բան ասացի՞ն նոքա:

Պ. Այո՛. «Ո՛վ Գալիլեացիք, ասացին, ի՛նչ
կանգնած յերկինս հայիք: Այս Յիսուս՝
որ վերացաւ, դարձեալ զալոց է մի որ իւր
փառօքն»:

Է. Այժմ ո՛ւր է Յիսուս:

Պ. Է՛՛ որ Աստուծոյ աջ կողմը նստած, այ-
սինքն՝ իւր Աստուածային յաւիտենական
փառաց մէջ:


Է. Յետ այնորիկ անդ մնացին աշակերտքն
Յիսուսի և նոցա հետ զտեալ հաւատա-
ցելոց բազմութիւնն:

Պ. Ո՛չ. այլ՝ նոյն օրին դարձան ամենքն յԱ-
րուսաղէմ, որովհետև Ձիթնեաց լեռնէն

մինչև յայն քաղաքը՝ իբր 700 քայլաչափ
ճանապարհ էր, և ս'չ աւելի:

Հ. Առաքեալքն յոր տեղ բնակեցան:

Պ. Մոքա բնակեցան այնուհետև 'ի միասին
մի տան մէջ*, սպասելով Հոգւոյն սրբոյ
գալստեան**, ինչպէս պատուիրած էր
Յիսուս:



* Այսինքն՝ այն մեծ վերնատան մէջ, ուր Յիսուս 'ի մատ-
նութեան գիշերին՝ յետ ուտելոյ զպատեքը և յետ լուանալոյ
զերկոտասանից ոտքերը՝ սահմանած էր զՊատարագի խորհուր-
դը, և ուր երկու անգամ երեւեցած էր Առաքելոյ՝ յետ յա-
րութեան:

** Հոգւոյն սրբոյ գալուտան առ Առաքեալս՝ եղև նոյն վեր-
նատան մէջ, յետ տան աւուրց վերանալոյն Յիսուսի, այսին-
քն՝ 'ի յիսներորդ օրն յետ յարութեան:



« Օ, արմանային ամենեքեան որ լսէինն 'ի նմանէ՛
ընդ իմաստու թիւնն և ընդ պատասխանիս նորա »:

« Օ, արմանային ընդ բանս շնորհացն՝ որ ելանէին
'ի բերանոյ նորա »:

« Օ, արմանային ընդ վարդապետու թիւնն նորա,
զի իշխանու թեամբ էր բանն նորա »:

Ղ. 46: Գ. 22: 32:





ՊԱՏԱՍԻՒԱՆԻՔ

ԿԱՄ

ՎՃՌԱԿԱՆ ԲԱՆՔ

ՎՐԻՍՏՈՍԻ

—

Ա.

Հ. Երբ որ Հրէայք բամբասեցին զՅիսուս՝ ճաշ ուտելոյն համար ՚ի տան Մատթէոս* մաքսաւորի**, Յիսուս ինչ ասաց:

Պ. «Առողջ մարդոց՝ բժիշկ հարկաւոր չէ, ասաց, այլ՝ հիւանդաց: Կոչնալէս և ես եկած եմ՝ ոչ զարդարները՝ այլ զմեղաւորները յա-

* Սա կոչէր ևս Ղևի Ալփեայ (Մարկ. ք. 14), որ աշակերտեցաւ Յիսուսի, և ապա Աւետարանչաց առաջինն եղև:

** Մաքսաւորք, որպէս և լուսնայտիտիք, վատահամբաւ և ատելի էին միշտ շրէից մէջ իբրև անիրաւ՝ զրկող և յախշտակող մարդիկ. ուստի և առ հասարակ Մեղաւորք կոչէին:

պաշխարութիւն կոչելոյ համար» (Մատ. Թ. 11—13: Ղուկ. Է. 30—32):

Բ.

Հ. Արբ որ Հրէայք հարցուցին Յիսուսին՝ Թէ «Շաբաթի որչափն է բժշկութեան գործել» Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ:

Պ. «Գուք զձեր ոչխարը՝ որ փոսի մէջ անկած լինի՝ շաբաթ օրը դուրս չէ՞ք հաներ, ասաց: Աթէ այդ արժան է, արժան է ուրեմն և զմարդ բժշկելն. վասն զի մարդ առաւել է քան զոչխար» (Մատ. ԺԷ. 10—12):

Գ.

Հ. Արբ որ Յովհաննու Մկրտչի հրամանաւ՝ նորա աշակերտաց երկուքն եկին հարցուցին Յիսուսի, Թէ «Գո՞ւ է՞ Մեակայն, որ պիտի գայեր, Ի՞նչ բերէ յառեօ՞ր», Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ:

Պ. «Գնացէք, ասաց, պատմեցէք Յովհաննու ինչ որ լսեցիք և տեսիք. ահա՛ն կոյրքն տեսանեն, կազքն զնան, բորոտքն սրբին, խուլքքն լսեն, մեռեալքն յառնեն, աղքատքն ա-

Լեւոարանին: Եւ երանի այն մարդոյ՝ որ չգայ-
թակղիր իմ վերայ» (Պ. ուկ. է. 19—23):

Պ.

Հ. Երբ որ Յիսուսի աշակերտքն հար-
ցուցին նմա՝ թէ «Ի՞նչ է պարծառն որ մե՛տ ընթե-
լուքս քիչ-քիչ չի մտնուի քեզիս», նա ի՞նչ
ասաց:

Պ. «Այդոր պատճառն ձեր թերահաւա-
տութիւնն է, ասաց: Եթէ մանանկի չափ
հաւատք ունենայք, և ասէք այս լերանս՝ թէ
յայտ րեղէ յայն րեղ խիտի, փոխուի. և ոչ մի
բան անկարելի չլինիր ձեզ» (Մատ. Ժէ. 18.
19):

Ե.

Հ. Երբ որ Յիսուսի աշակերտքն կամե-
ցան գիտել՝ թէ իւրեանց միջէն ո՞վ մեծ պիտի
լինի յերկնից արքայութեան, Յիսուս ի՞նչ ա-
րար, և ի՞նչ ասաց նոցա:

Պ. Մանուկ մի կոչելով՝ եցոյց նոցա և
ասաց. «Նշմարիտ ասեմ ձեզ. եթէ դուք փոք-
րիկ մանկանց պէս չլինիք, յարքայութիւն չէք
կարող մտանել. ո՞վ որ խոնարհեցուցանէ զինքը՝

այս մանկանս նման, նա է մեծ յերկնից արքայու-
ութեան: Եւ ով որ զմինը յայսպիսի ման-
կանց՝ իմ անուամբս ընդունի, զին ընդունի»
(Մատ. ԺԴ. 1—5):

Չ.

Հ. Երբ որ Յիսուսի աշակերտքն զմանր
տղայքը արգելեցին՝ որ Յիսուսի չմօտենան,
Յիսուս ի՞նչ ասաց, և ի՞նչ արար:

Պ. Բարկացաւ, սաստեց արգելողաց՝ և
ասաց. «Թողէ՛ք դոցա որ դան ինձ մօտ. վասն
զի այդպիսեանց է երկնից արքայութիւնն»: Եւ
զտղայքը յիւր զիրկը առնելով՝ և ձեռն դնելով
նոցա վերայ՝ օրհնեց (Մատ. ԺԺ. 13. 15:
Մարկ. Ժ. 13—16):

Խ.

Հ. Երբ որ Հրէայք տաճարի սրահում
ասացին Յիսուսի՝ «Եթէ դու ես Քրիստոսն, յայտնե՛
Իշ»), Յիսուս ի՞նչ ասաց:

Պ. «Ես յայտնանձ եմ, ասաց, և այն
գործքերն՝ զորս ես գործեմ իմ Հօր անուամբ,
վկայեն վասն իմ. բայց դուք չկամիք հաւատալ,

որովհետեւ չէք յիմ ոչխարացս: Իմ ոչխարքն լսեն իմ ձայնիս՝ և հետեին ինձ. և ես պիտի տամ նոցա զյաւիտենական կեանքը » (Յովհ. Ժ. 24—28):

Բ.

Ճ. Երբ որ հարուստ պատանին հարցոյց Յիսուսի՝ թէ «^օ՞նչ բարե գործ գործեմ՝ որ շահ տեսնեմ կեանք ժառանգեմ »), Յիսուս ինչ պատասխան տուաւ:

Պ. «**Օ՛ւստուծոյ պատուիրանքը պահէ, ասաց**»: Բայց որովհետեւ յայտնեց պատանին՝ թէ ՚ի մանկութենէ պատուիրանապահ եղած է միշտ, դարձեալ ասաց նմա Յիսուս. «**Եթէ կամիս կատարեալ լինել, զնա՛, ինչ որ ունիս՝ վաճառէ՛, աղքատաց տուր, և եկ իմ ետեէս**»: Պատանին լսելով զայս՝ խոժոռուեցաւ. ուստի և ՚ի բաց զնաց տրամութեամբ: Յայնժամ և Յիսուս ասաց աշակերտացն. «**Աւելի հեշտ է մալուխի* (այսինքն՝ հոսոս զնանի)**

* Բառս մալուխի՝ (որ առուած է Սրբաբացւոց լեզուէ) նշանակէ ևս ուրբ: Սոյնպէս և Լատինական բառս գոթելուս՝ նշանակէ ո՛չ միայն նախապարտ, այլ և ուրբ:

ասեղի ծակէն անցանել, քան թէ հարուստ մարդոյ յերկնից արքայութիւնն մտանել» (Մատ. ԺԹ. 16—24):

Թ.

Հ. Այլք որ Յիսուսի աշակերտքն զարմացան՝ ՚ի նմանէ անիծուած թզննւոյն շուտով չորանալոյն վերայ, Յիսուս ի՞նչ ասաց նոցա:

Պ. «Գուք ևս, ասաց, եթէ հաւատք ունենայք՝ և չերկմտիք, զամեն բան կարող էք առնել. և եթէ լերանդ ասէք՝ Վերջո՛ւր, և ՚ի քով անկեր, անկանի» (Մատ. ԽԹ. 20. 21):

Ժ.

Հ. Այլք որ Հրէից քահանայապետքն և դպիրքն և ծերքն հարցուցին Յիսուսի՝ թէ «Գո՞ւ որով էշխանութեամբ տարողես և ուսուցանես, և ո՞վ որո՞տ տեղ զայդ էշխանութեանդ», Յիսուս ի՞նչ պատասխանեց:

Պ. «Այս ևս ձեզ բան մի հարցանեմ, ասաց, և դուք ինձ պատասխան տուէք. Յովհաննու մկրտութիւնն (այսինքն՝ մկրտելն ըզմարդիկ) ուստի՞ էր, յերկնից (Մատուծոյ)

էր, [Թէ 'ի մարդոց »: Եւ որովհետեւ նորա՝ յետ մտածելոյ այս բանիս վերայ՝ « 24 էրե՛՛» ասացին, այն պատճառաւ և Յիսուս պանսպանձեցոյց զնոսա՝ այս խօսքովս. « Ուրեմն ես ևս չասեմ ձեզ՝ որով [չխանութեամբ զայս առնեմ» (Մարկ. ԺԹ. 27—33):

ԺԵ.

Հ. Երբ որ Փարիսեցիք և Հերովդիանոսք* խորամանկութեամբ հարցուցին Յիսուսի, [Թէ «Աբժա՞ն է հարկ որո՞ւ Հու՞մայեցո՞ւյ կոյսեր, ե՛ւ «չ», Յիսուս ի՞նչ ասաց նոցա:

Պ. «Օ, ի՞նչ փորձէք զիս, ասաց, կեղծաւորք. ցուցէք ինձ զհարկի դահեկանը»: Եւ երբ որ ցուցին՝ հարցոյց «Որո՞նք է պատկերս այս կամ գիրս»: Եւ նորա պատասխանեցին «Պայսէրն է»: Յայնժամ և Յիսուս «Պանացէք, ասաց, ինչ որ Պայսերն է՝ Պայսեր տուէք, և ինչ որ Եստուծոյն՝ Եստուծոյ» (Մատ. իբ. 15—22):

* Հերովդիանոսս կոչէին Հրէից մէջ այն ազանգաւորքն նոցա՝ որք զառաջին Հերովդէս արքայն Հրէաստանի կեղծաւորութեամբ պաշտած և ընդունած էին իբրև զՄեսիս:

ԺԲ.

Հ. Յիսուս երբ որ տեսաւ՝ թէ այրի աղքատ կին մի երկու լումայ* ձգեց տաճարի դանձանակին մէջ, Յիսուս ինչ ասաց նորա համար:

Պ. «Այն տառապեալ այրին, ասաց, քան զամեն փող ձգողները աւելի ձգեց. վասն զի նորա զիւրեանց հարստութեան աւելորդը ձգեցին, բայց նա՝ իւր չքաւորութեամբն ինչ որ ունէր՝ բոլորը տուաւ» (Մարկ. Ժբ. 41—44):

ԺԳ.

Հ. Երբ որ Յիսուսի աշակերտքն տաճարի զեղեցիկ քարերի և շինութեան վերայ զարմացան, Յիսուս ինչ ասաց նոցա:

Պ. «Գալոց են, ասաց, այնպիսի օրեր, որ այդ ամենայն շինուածքդ՝ զոր այժմ տեսանէք՝ պիտի քանդուին բոլորովին, և քար քարի վերայ չպիտի մնայ» (Ղուկ. ին. 5. 6):

* Լումայ՝ կոչէր մանրագոյն փողն, կամ մի փողի չորրորդ մասն: Երկու լումայն՝ էր մի նախորակի:

ԺԳ.

Հ. Երբ որ Պետրոս զՅիսուս՝ Որքէ՛ Աս-
տուծոյ դաւանեց, Յիսուս ի՞նչ ասաց նմա:

Պ. «Երանի՛ քեզ, ասաց, Աիմոն որդի
Յովնանու* . վասն զի ո՛չ մարմին և արիւն
յայտնեց քեզ զայդ, այլ իմ Հայրն՝ որ յեր-
կինս է: Գու վէ՛մ ես, և ես այդ վիմի վերայ
պիտի շինեմ զիմ եկեղեցին, և զժոխոց զբուն-
քըն** չպիտի յաղթահարեն զնա» (Մատ. ԺԳ.
17. 18):

ԺԵ.

Հ. Երբ որ Փարիսեցիք և դպիրք հարցու-
ցին Յիսուսի, թէ «Ինչո՞ւ համար քո աշակերտն ընդ-

* Պետրոսի առաջին անունն Սիմոն կամ Շաւոռէ էր, և
Քրիստոս փոխած էր զայն ՚ի Վեփոս (Յովհ. ւ. 42), որ յԱ-
սորոց լեզուէ ՚ի Յունականն թարգմանի Պեթրոս, և ՚ի Հայ-
կականն՝ Վեփ: Ուստի և երբեմն Սիմոն-Վեփ անուամբ յիշի
յԱւետարանի (Յովհ. ւ. 40 : Գ. 8):

** Այսինքն՝ հալածչաց և բռնաւորաց զօրութիւնքն կամ
իշխանութիւնքն կարողանալու շէն զհաւատոյդ շինուածը քա-
կել:

դէ՛մ ծերոյց աւանդութեան՝ անլուսայ, յետօր հաց ուտին»)

Յիսուս զի՛նչ պատասխան տուաւ :

Պ. « Ինչ որ ՚ի բերան մտանէ, ասաց, այն չպղծեր զմարդ, այլ՝ ինչ որ ՚ի բերանոյ ելանէ, ևս և այն ամենայն չար խորհուրդքն՝ որ ՚ի սրտէ բղխին, որպիսի են՝ զողութիւն, սպանութիւն, հայհոյութիւն, սուտ վկայութիւն, և այլն» (Մատ. ԺԷ. 2. 11. 17—19: Մարկ. Է. 5. 15. 18—23):

Ժ.Օ.

Հ. Երբ որ Պետրոս հարցոյց Յիսուսի, թէ («Բանի՞ անգամ խողովիւն արամ՝ ինչ ընդդէմ մեղանլու էղբօր, մինչև՝ ցեօխն անգամ արամ»), Յիսուս ի՛նչ պատասխանեց :

Պ. «Չասեմ քեզ, ասաց, մինչև ցեօթն անգամ, այլ՝ մինչև ցեօթանասնեկի եօթն (այսինքն՝ շրջ հարիւր իննսուն) անգամ տո՛ւր թողութիւն, եթէ նա դառնայ (չընչ) և խոստանայ ապաշխարել» (Մատ. ԺԷ. 21. 22: Ղուկ. ԺԷ. 3. 4):

ԺԷ.

Հ. Երբ որ մինն 'ի Վսլրաց հարցոյց Յիսուսի, թէ «Օրինաց զիջ ո՞ր պարտաւորանն զե՞ծ է քա՞ն շա՞ք զին», Յիսուս իհնչ պատասխան տուաւ նմա:

Պ. «Մեծ և առաջին պատուիրանն՝ աւսաց՝ այս է. Միրեսցես զՏէր Աստուած. քո յամենայն սրտէ քու մեկ և յամենայն անձնէ քում մէ և յամենայն զօրութենէ քում մէ: Աւ երկրորդն ևս նման սմին. Միրեսցես զընկեր քո իբրև զանձն քո: Յայս երկուց պատուիրանացս կախուած են ամենայն օրէնքն և մարդարէքն (այսինքն՝ ճարգութից Գործքն-Եկեղեցի). և քան զսուսա այլ մեծ պատուիրան չկայ» (Մատ. իբ. 35—40. Մարկ. ժբ. 28—31):

~~~~~



«Օ այս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն և առանց առակի ո՛չինչ խօսէր ընդ նոսա . զի լցցի տսացեալն 'ի մարգարէէն . Բացից առակօք զբերան իմ, բղխեցից զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի» :

Մ-րի . ԺԷ . 34 . 35 :

«Այսպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել . և առանց առակի ո՛չինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն» :

Մ-րի . Ժ . 33 . 34 :







ՎԵՂՈՒԵՆՕՒՐ

**ՅԱՌԱԿԱՒՕՍՈՒԹԵԱՆՅՆ**

ՎՐԻՍՏՈՍԻ

Ե.

ԵՐԿՈՒՅ ՊԱՐՏԱՊԱՆԱՅ ԱՌԱԿՆ:

Մի փոխատու մարդու երկու հոգի պարտապան էին, մինն պարտք ունէր հինգ հարիւր դահեկան, և միւսն՝ յիսուն: Եւ որովհետեւ կարող չէին նոքա պարտավճար լինել, փոխատուն զերկոցունց պարտքը ևս շնորհեց: Այն ուրեմն յայն երկուց պարտապանաց պիտի առաւել սիրէ զպարտատէրը: — Յայտ է թէ նա՛ որոյ շատ էր պարտքն (Ղուկ. Է. 41—47):

Յիսուս այս առակաւս՝ զոր ասաց Սիմոնի Փարիսեցւոյն (երբ որ հրաւիրուած էր ՚ի տուն նորա՝ ճաշ ուտելու), կամեցաւ հասկացուցանել, թէ բազմամեղ ապաշխարողն ևս՝ եթէ հաւատոյ և յուսոյ հետ կատարեալ սէր ու

նենայ առ Աստուած, թողութիւն գտանէ.  
և այնու իսկ պարտաւորի առաւել ևս սիրել  
զԱստուած:

Բ.

ՍԵՐՄԱՆԱՑԱՆԻ ԱՌԱԿՆ:

Երբ որ սերմանացանն, սերմն ցանել, սերմերից ոմանք ճանապարհի վերայ անկանելով՝ կոխուեցան կամ թռչնոց կերակուր եղեն. ոմանք ապառաժի վերայ անկանելով՝ ուր չկայր շատ հող, թէպէտ և շոյտ բուսան, բայց չկարողանալով խոր արմատ բռնել՝ արևը ծագածին պէս իսկոյն այրեցան ու չորացան. ոմանք ևս փշոց մէջ անկանելով՝ նոցա հետ բուսան և ապա փշահեղձ եղեն. իսկ լաւ և պարտա հողոյ վերայ անկածներն արգիւնաբեր եղեն, պտուղ տալով մի հատի տեղ՝ որն հարիւր, որն վաթսուն, և որն երեսուն (Մատ. Ժ. 4—8: Ղուկ. Ը. 5—8: Մարկ. Դ. 3—8):

Օպս առակս այսպէս մեկնեց Յիսուս՝ ըստ խնդրոյ Առաքելոցն: Սերմն՝ Աստուծոյ

բանն է. ցանուած գետինքն՝ մարդոց սիրտքն  
են: Թէպէտ զԱստուծոյ բանը շատերն լսեն,  
բայց անհաւատ՝ թուլահաւատ՝ աշխարհա-  
սէր և փառասէր մարդիկն կարող չեն գործով  
արդիւնաւոր առնել զայն. այլ միայն ջերմե-  
ռանդութեամբ լսողքն՝ կարող լինին առաքի-  
նական պտուղ բերել թէ՛ շատ թէ՛ սակաւ:

Գ.

ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ԲԻՒՐ ՔԱՆՔԱՐ ՊԱՐՏՔ ՌԻՆՈՂ  
ԾԱՌԱՅԻ ԱՌԱԿՆ:

Թագաւոր մի իմանալով՝ որ իւր ծառայ-  
ից մինն բիւր (այսինքն՝ ԴՄԱՆ ԿՂԱՐ) քան-  
քար պարտք ունի իւր զանձարանին, հրա-  
մայեց որ զնա և զնորա կինը և որդիքը հան-  
դերձ ամենայն ստացուածովքը վաճառեն, և  
զպարտքը հատուցանել տան: Ծառայն զնայ  
թագաւորի ոտքերին անկաւ, և ժամանակ խրնդ-  
րեց հատուցանելու: Թագաւորն ևս զթալով՝  
արձակեց զնա, և զըզոր պարտքը շնորհեց:

Յետոյ նոյն իսկ ծառայն սկսաւ նեղել և  
խեղդել զմինը յիւր ծառայակիցներէց՝ որ հա-

րիւր դահեկան պարտք ունէր նմա. և չյօժաւ  
ընդով ամենեւին երկայնամիտ լինել (հոգեբեւել)  
վակել տուաւ զնա բանտի մէջ: Պարտապանի  
ընկերքն ցաւելով խեղճին վերայ՝ զնացին պատ-  
մեցին թագաւորին զայս անցքս: Առջեց յայն-  
ժամ թագաւորն զանգով թ պարտապահանջը.  
«Օտուայ չար, ասաց նմա բարկութեամբ. ես  
քո աղաչանացդ համար՝ զբոլոր պարտքդ թո-  
ղի. պատշաճ չէր ուրեմն և քեզ՝ ողորմիլ քո  
ճառայակցին, ինչպէս ես քեզ ողորմեցայ»:  
Եւ յետ զայս ասելոյ, հրամայեց՝ զահիճ՝ նե-  
րին մատնել զչար ճառայն, մինչև որ զբոլոր  
պարտքը հատուցանէ (Մատ. ԺԴ. 23—34):

Եյս առական հասկացոյց Յիսուս, թէ  
երկնաւոր շայրն (Եստուած) ևս՝ մեր յանցա-  
նաց ներող չլինիր, եթէ մեք միմեանց յանցա-  
նաց չներեմք:

Գ.

ԱՆՈՒՆԱԼ ՎԻՐԱՒՈՐԻ ԵՒ ՍԱՄԱՐԱՑԻՈՅ ԱՌԱԿՆ:

Մարդ մի յԱրուսաղէմէ յԱրիբով զնա-  
լոյ ժամանակին՝ յաւազակաց ձեռքը անկաւ,

որք յետ մերկացուցանելոյ և վերաւորելոյ զնա՝  
[Թողին կիսամահ ճանապարհի վերայ, և զնա-  
ցին: Անցաւ յայն տեղէն նախ քահանայ մի,  
և ապա Ղևտացի մի: Թէպէտ երկուքն ևս  
տեսին զվերաւորը, բայց զանց արարին՝ առանց  
ամենևին օգնելոյ խեղճին: Ահա յետոյ ճա-  
նապարհորդ մի Սամարացի. սա երբ տեսաւ  
զվերաւորը՝ զթացաւ, ձէթ ու զինի ածեց  
վէրքին վերայ և պատեց: Ապա դնելով զնա  
իւր գրաստի վերայ՝ տարաւ ՚ի պանդոկ մի,  
և դարմանեց: Միւս օրը՝ երբ որ պիտի ելա-  
նէր անտի՝ երկու դահեկան տուաւ պանդոկա-  
պետին, պատուիրելով որ զվերաւորը դարմա-  
նելու հոգ տանի. և ինչ որ ծախս առնես, ա-  
սաց, դորա համար, միւսանգամ գալոյ ժամա-  
նակիս՝ պարտական եմ քեզ վճարելու (Ղուկ.  
Ժ. 30—35):

Յիսուս զայս առակս մի օրէնսգիտի պատ-  
մելով՝ կամեցաւ ուսուցանել, [Թէ ամենայն մար-  
դիկ պարտական են մարդասէր լինել միշտ, և  
ցաւակցաբար օգնել միմեանց՝ երբ որ կարող են:

Ե.

ՀԱՐԻԻՐ ՈՉԽԱՐԱՅ ԱՌԱԿՆ:

« Ի՞նչպէս թուի ձեզ, ասաց Յիսուս իւր աշակերտացն. Եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ, և յայն ոչխարաց մինն մոլորի, չէ՞ որ զիննսուն և ինն ոչխարը թողու լերանց վերայ՝ ուր տարած էր զնոսա արածելու, և երթայ ուրոնելու (Քորն. 12) զմի մոլորեալը. և եթէ պատահի որ գտանէ, յայտ է թէ առաւել ուրախ լինի այն մի մոլորուածի վերայ՝ որ գտանուեցաւ, քան թէ իննսուն և իննին՝ որք չէին մոլորուած» (Մատ. ԺԷ. 12. 13):

Այս առակաւս յայտնել կամեցաւ Յիսուս, թէ ինքն եկած է յաշխարհ իբրև հովիւ՝ զմարդկային ազգը (որք են իբրև մոլորեալ և կորուսեալ ոչխար\*) գտանելոյ և կեցուցանելոյ համար. և թէ՛ իւր Առաքչի՛ Հօր Աստուծոյ՛ կամքն այն է՝ որ ՚ի մարդոց և ոչ մինն չկորնչի:

\* Սաղմ. ճԺԸ. 176: Թ. Գևտ. Ժ. 25: Մատ. Ժ. 6:

Չ.

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՈՅ ԱՌԱԿՆ:

Մի մարդ երկու որդի ունէր: Արտսեր (†<sup>1</sup>  
+ւր) որդին խնդրեց առաւ յիւր հօրէն զիւր  
ժառանգութեան բաժինը, և զնալով 'ի հեռի  
քաղաք՝ այնպէս անառակ կեանք վարեց, որ  
զբոլոր ունեցածը վատնեց (†<sup>2</sup>-ցոյց): Աւ ու  
րովհետեւ 'ի նոյն ժամանակին սով ևս պատա-  
հեցաւ յայն կողմերում, այն պատճառաւ ըս-  
կրտաւ նա առաւել ևս չքաւորուիլ. և զնաց՝  
նոյն քաղաքի բնակչաց մէկին մօտ 'ի ծառայու-  
թիւն մտաւ, և ուղարկուեցաւ յագարակ խո-  
զեր արածելու. բայց անդ ևս ողորմելի եղև  
նորա վիճակն: Աարօս էր հացի, ցանկայր գո-  
նէ եղջիւրով\* զոր խոզքն ուտէին՝ փորը  
կշտացնել, բայց զայն ևս սուտղ չկայր:

Այսպիսի թշուառութեանց մէջ 'ի միտ  
բերելով նա զիւր հօր տունը՝ ուր ծառայքն  
անգամ հանգիստ ապրէին, որոշեց վերադառ-

\* Եւզիւր՝ մի տեսակ պտուղ է. Տաճկ. Բէլէ պոյն-դաւ:

նալ առ հայրն և աղաչել որ զինքը ծառայի տեղ ընդունէ. և այնպէս արար: Երբ որ տեսաւ զնա հայրն 'ի հեռուստ՝ զթացաւ, ընդ առաջ եկաւ, և ընդունեց զնա գրկախառն համբուրիւ: Յայնժամ որդին «Մեղայ ասաց, հայր, արժանի չեմ քո որդի կոչուելու»: Իսկ հայրն հրամայեց ծառայից՝ որ շուտով բերեն հազդընեն նմա զառաջին աղնիւ պատմութեանը, մատանի դնեն մատին, և ոտքերին կոշիկներ անցընեն. բաց յայմանէ պատուիրեց ևս՝ ըզպարարակ (չէր ոչ ոչ) եզը մորթել տալ և մեծահաց սեղան պատրաստել. «Ո՛ր այս որդիս, ասաց, մեռած էր՝ և կենդանացաւ, կորուսուած էր՝ և գտանուեցաւ»: Աստարուեցաւ իսկոյն հրամանն, և սկսան ամենքն ուրախանալ:

Ի նոյն ժամանակին երէց (ԲՅ) որդին՝ որ յազարակէն 'ի տուն դայր՝ երբ որ մտնեցաւ տանը, լսեց երգոց և պարուց ձայնը, և ծառաների մէկէն իմանալով այնպիսի ուրախութեան պատճառը, այնպէս բարկացաւ՝ որ չկամէր 'ի տուն մտանել, և երբ որ հայրն 'ի դուրս ելաւ՝



նման ևս ցոյց տուաւ զիւր դժգոհութիւնը. «Այս քանի՛ տարի է, ասաց, որ ես ամենայն հնազանդութեամբ ծառայած եմ քեզ, և դու ուլ (այծէ յագ) մի ևս ինձ չես տուած՝ որ բարեկամացս հետ ուրախութիւն առնէի. բայց այդ որդւոյդ համար՝ որ զըղոր ստացած ժառանգութիւնը անառակութեամբ վատնեց, զպարարակ եզը մորթել տուիր»։ Իսկ զթասիրտ հայրն զայս պատասխանս տուաւ նմա. «Արդեակ, դու միշտ ինձ հետ ես, և ինչ որ իմն է՝ քո է. այժմ պարտ է ուրախանալ, որովհետեւ քո այս եղբայրդ մեռած էր՝ և կենդանացաւ, կորուսուած էր՝ և գտանուեցաւ» (Պ. ուկ. Ժե. 11—32)։

Այս առակաւս ցուցանել կամեցաւ Յիսուս, թէ Աստուած՝ իբրև Հայր զթութեանց՝ պատրաստ է յիւր կողմանէ ընդունելու քաղցրութեամբ և զայն մեղաւորքը՝ որք դառնան առ նա ապաշխարութեամբ։

Լ.

ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ԱՌԱԿՆ\*.

Մեծատուն մարդ մի\*\* կայր, որ ամենայն օր փառաւոր շորհրով զարդարուած՝ ուտելով խմելով ուրախ լինէր: Նորա դրան մօտ անկեալ կայր և մի աղքատ մարդ վէրքերով լի՝ Ղազարոս անուն, որ կարօտ էր նոր:ս սեղանի փշրանացը, և շունք գային լիզէին զվէրքերը: Երկուքն ևս մեռան. աղքատի հոգին՝ հրեշտակաց առաջնորդութեամբ տարուեցաւ յԱբրահամու Վոզը (այսինքն՝ յայն կայանն՝ ուր էին վախճանեալ սուրբ նահապետաց հոգիքն). իսկ մեծատան հոգին զնաց ՚ի դժոխս. ուր և՝

---

\* Չայս առակս ոմանք համարին՝ իրապէս կատարուած անցքի պատմութիւն. ոմանք ևս ասեն՝ թէ սկսուածն պատմութիւն է, իսկ աւարտն՝ առակ:

\*\* Մեծատունն՝ ըստ ասելոյ ոմանց՝ այն Հերովդէան էր, որ զԲեթղէհէմի մանկունքը կոտորել տուաւ (որպէս գրէ Յ. վանկան վ. ՚ի հարց.): Ոմանք ևս ասեն՝ թէ այլ մարդ էր՝ Նինքուսոս անուն: Բայց այսօրիկ յանստոյգ աւանդութենէ առուած խօսքեր են և հիմն չունին:

երբ որ տանջանաց մէջ էր՝ մտաւորական ա-  
ջօք տեսանելով զԱբրահամը, և նորա մօտ ըզ-  
Վազարոսը՝ երջանիկ վիճակի մէջ հանդստա-  
ցած, աղաղակեց «Հայր Աբրահամ, ողորմիր  
ինձ, ուղարկէ՛ զՎազարոսը՝ որ մատի ծայրովն  
ջուր կաթեցրնէ լեզուիս վերայ, վասն զի պա-  
պակուում՝ տոչորւում եմ»։ Բայց Աբրահամ  
մերժեց զնորա խնդիրը՝ ասելով «Արդեակ, 'ի  
միտ բեր՝ որ դու 'ի կենդանութեանդ ժամա-  
նակին լի՛ էիր ամենայն բարութեամբք, իսկ  
Վազարոսն չարչարանաց մէջ էր. ուստի իրա-  
ւամբք սա այժմ այս տեղ մխիթարւում է,  
և դու այդ տեղ տանջւում ես։ Բաց յայսմա-  
նէ՛ մեծ վիճ կայ, ասաց, ձեր և մեր մէջ. մի-  
մեանց մօտ գնալ գալ՝ անկարելի է»։

Դարձեալ աղաղակեց մեծատունն «Աղա-  
ջեմ զքեզ՝ Հայր, ուղարկէ՛ զայդ մարդը զո՛նէ  
յիմ հօր տունը՝ իմաց տալոյ համար իմ հինգ  
եղբարցս, որ զգաստանան նոքա՝ և չզան յայս  
տանջանաց տեղս»։ Պատասխան տուաւ նմա  
Աբրահամ. «Նոքա ունին իւրեանց մօտ զՍուլ-  
սիսի և զայլ մարդարէից գրեանքը, թող նոցա

զրած խրատներովը զգաստանան»։ Ա՛չ, Հայր  
Աբրահամ, կրկնեց մեծատունն, այդպէս չը-  
նիր, այլ հարկաւոր է զմեռելոց մինը ուղար-  
կել առ նոսա որ ապաշխարեն»։ Բայց այս ա-  
ղաղակս ևս անօդուտ եղև. վասն զի Աբրահա-  
մու վերջին խօսքն առ մեծատունն՝ այս եղև.  
«Եթէ նոքա արդէն Մովսիսի և այլ մարդա-  
րէից խրատներին լսող չեն, ուրեմն՝ եթէ ՚ի  
մեռելոց մինն ևս յառնէ (կենդանաց), նորա  
ասածներին ևս չպիտի հաւանին» (Ղուկ. ԺԳ.  
19—31)։

Յիսուս այս առակաւս կամեցաւ ցուցա-  
նել, թէ ամբարիշտ մարդիկ՝ թէև աշխար-  
հային ժամանակաւոր փառաց և երջանկութե՛  
հասած լինին՝ պիտի դատապարտուին արդա-  
րապէս յաւիտենական տանջանօք. իսկ արդար  
մարդիկ՝ թէև տառապանաց և նեղութեանց  
մէջ լինին՝ պիտի երջանկանան ՚ի հանդերձեալ  
կեանս մշտնջենաւոր հանգստեամբ։

Բ.

ԱՆԻՐԱԻ ԴԱՏԱՆՈՐԻ ԱՌԱԿՆ:

Մի քաղաքում դատաւոր մի կայր, որ ոչ յԱստուծոյ երկնէք (Վեհայր), և ոչ ՚ի մարդոց ամաչէր: Այրի կին մի ևս զայր ամենայն օր նորա մօտ՝ և աղաչէր որ զիւր դատաստանը քննէ և իրաւունք առնէ: Յերկար ժամանակ դատաւորն ուշ չգրաւ ողորմելի կնոջ խնդրոյն, և փոյթ չունեցաւ նորա գործոյն կատարումն տալու. բայց մի օր տեսանելով թէ կինն ստէպ ստէպ զալով կրկնում է զիւր աղաչանքը, սկսաւ ինքնին յիւր մտքումը ասել. «Քէպէտ և յԱստուծոյ երկիւղ չունիմ ես, և ՚ի մարդոց ևս չամաչեմ, բայց որովհետեւ այս կինս անհանգիստ առնէ զիս, վճիռ տամ՝ վերջացրնեմ սորա գործը, որ այսուհետեւ ևս չգայ աղաչանքը կրկնելու» (Ղուկ. ԺԴ. 2—7):

Յիսուս զայս առակս ասաց աշակերտացն՝ ուսուցանելոյ համար, թէ հարկաւոր է յարատեւել յաղօթս՝ առանց ձանձրանալոյ. վասն զի «Եթէ անիրաւ դատաւորն, ասաց, ողորմեցաւ

անդադար աղաչողին, միթէ Աստուած չ'ողոր-  
միր իւր ծառայիցն՝ որք զիշեր ու ցերեկ աղա-  
ղակեն առ նա»):

ԹՎ.

ՓԱՐԻՍԵՑԻՈՅ ԵՒ ՄԱՔՍԸՒՈՐԻ ԱՌԱԿՆ:

Երկու հոգի, մինն Փարիսեցի և միւսն  
Մաքսաւոր\*, մտան ՚ի տաճարը աղօթելոյ հա-  
մար: Փարիսեցին սկսաւ աղօթել այսպէս. «Աս-  
տուած իմ, փառք քեզ, որ այլ մարդոց կամ  
այս Մաքսաւորիս նման՝ յափշտակող, անի-  
րաւ և շուն չեմ, այլ՝ մի շաբաթում երկու օր  
պահք պահեմ, և յիմ ամէն ստացուածոցս  
(ունեցածներիցս) տասանորդ տամ»: Իսկ  
Մաքսաւորն փոքր մի հեռի յառանձին տեղում  
կանգնած՝ չէր համարձակում զաչքերը ան-  
գամ ՚ի վեր բարձրացնել. այլ՝ զկուրծքը ծե-  
ծելով ասէր. «Աստուած, քաւես զիս զմե-

---

\* Ոմանք կարծեն՝ թէ սա էր Մատթէոս կամ Ղևի մաք-  
սաւորն՝ որ մեծ հացկերոյթ արար Յիսուսի յիւր տանը (Մատ-  
թէ. 9. 10: Ղուկ. Ե. 27—29). և ապա Առաքեալ և Աւե-  
տարանիչ եղև: Բայց անհիմն է այս կարծիքս:

ղաւորս (այսինքն՝ մեղաւորիս ներող եղեր)» :  
Եւ ապա դարձաւ սա յիւր տունը՝ առաւել  
քան զՓարիսեցին արդարացած գոլով (Ղուկ.  
ժԸ. 10—14) :

Յիսուս այս առակաւս՝ նախ յանդիմանեց զՓարիսեցիքը և զնոցա նման կեղծաւորքը, որք պարծենային թէ ինքեանք արդարք են, և զայլ մարդիկը արհամարհէին. և երկրորդ՝ հասկացոյց, թէ զինքը բարձրացուցանողն՝ պիտի խոնարհի (ցածանայ), և զինքը խոնարհեցուցանողն՝ պիտի բարձրանայ :

Ժ.

ՏԱՆ ՏԻՐՈՋ ԵՒ ՎԱՐՉԵԱԼ ՄՇԱԿԱՑ ԱՌԱԿՆ :

Տանուտէր մի յառաւօտուն ելաւ մշակներ բռնեց՝ մի մի դահեկան օրական վարձ խոստանալով, և ուղարկեց զնոսա յայգին : Յետոյ երեք՝ վեց՝ ինն և տասնևմէկ ժամերում այլ ևս պարապ մարդիկներ գտաւ փողոցներումը և հետ զհետէ յայգին ուղարկեց՝ խոստանալով վարձ տալ նոցա ինչ որ արժան էր : Արբ որ երեկոյ եղև, հրամայեց նա իւր տնտեսին՝ իւրաքանչիւր

մշակի հաւասար չափով վարձ տալ՝ մի մի դահեկան: Աւ նա այնպէս արար: Չայս տեսանելով յառաջուց վարձուած մշակքն՝ սկսան տրտնջալ. «Այս ի՞նչպէս բան է, ասացին տան տիրոջը. վերջին եկողքն ևս՝ որք մի ժամ գործեցին, այնչափ վարձ առին՝ որչափ մեք, որ բոլոր օրը աշխատեցաք՝ տօթին (որով) դիմանալով »: Յայնժամ Տանուտէրն դարձաւ ասաց այն տրտնջողաց մէկին. «Վ՛նկեր, ես զքեզ չեմ զրկած. չե՞ որ մի դահեկանի վարձուած ես դու. առ ուրեմն զքո վարձդ՝ և գնա. իմ իսկ կամքս է՝ յետոյ եկողացն ևս այնպէս վարձ տալ, ինչպէս տուի քեզ. և միթէ չունի՞մ իշխանութիւն իմ բաների վերայ՝ առնել ինչ որ կամենամ » (Մատ. Ի. 1—15):

Այս տուական հասկացուցանել կամեցաւ Յիսուս, թէ այն մարդն ևս՝ որ անազան (ի ծերութեան ժամանակին)՝ բայց մեծագոյն ջերմեռանդութեամբ՝ մտած է յԱստուածապաշտութեան ճանապարհը, մեծամեծ շնորհաց և վարձուց արժանանայ յողորմութենէն Աստուծոյ:



ԺԸ.

ԱԶՆՈՒԱԿԱՆՆԻ ԵՒ ՔԱՆՔԱՐԱՌՈՒ ԾԱՌԱՅԻՑ  
ԱՌԱԿՆ:

Ազնուական մարդ մի՛ երբ որ պատրաստուած էր ՚ի հեռի աշխարհ գնալու՝ թագաւորութիւն ստանալոյ համար, կոչեց զիւր ծառայքը, և իւրաքանչիւրոց առանձին առանձին փող (բարձր) բաժանեց. մէկին տուաւ հինգ քանքար\*, մէկին՝ երկու, և մէկին՝ մէկ. և պատուիրեց որ մինչև յիւր վերադառնալը ՚ի գործ դնեն և շահեցուցանեն: Յետ վերադարձին կոչեց դարձեալ զծառայքը, հաշիւ պահանջեց, և կամեցաւ խմանալ՝ թէ ո՞վ որքան շահեցուցած է զիւր առածը: Ընդ քանքար առնողն՝ հինգ ևս շահ բերաւ, և երկու առնողն՝ երկու ևս շահ. ուստի երկուքն ևս գովութիւն լսեցին՝ պատուեցան և վարձատրուեցան: Իսկ երրորդն՝ որ մէկ քանքար առած էր,

\* Բարձրքն՝ որ Տաղմուր կամ Մանուս ևս ասի, է 125 լիար ոսկւոյ կամ արծաթոյ, որ այժմ ըստ ոմանց՝ համարի 4 100, այսինքն՝ 500 դրամի:

բերաւ տուաւ զքանքարը ասելով «Տէր, որովհետեւ զխտէի որ դու խիստ մարդ ես, վախենալով՝ թէ մի գուցէ կորուսանեմ զիմ առած փողը՝ տարայ թաղեցի զայն գետնի տակ, և այժմ բերի. առ ահա զտուածդ»: Արբ որ զայս բանս լեց Տէրն՝ բարկացաւ. «Ե՛յ չար և ծոյլ ծառայ, ասաց, եթէ զխտէիր որ ես խիստ մարդ եմ, վասն է՞ր ուրեմն զիմ արծաթը սեղանաւորաց չտուիր, որ ես այժմ տոկոսեօք (շահու) պահանջէի»: Աւ յետ զայս ասելոյ՝ արտաքսեց զանպիտան ծառայն, և զքանքարը առնելով՝ ի նմանէ՛ տուաւ այն ծառային՝ որ զտասն քանքարը ունէր (Մատ. ին. 14—30: Ղուկ. ԺԹ. 12—26):

Այս առակաւս հասկացոյց Յիսուս, թէ Աստուած արդարադատ գորով՝ իւրապարզեքանքարաց (ինչո՞ւ չ՞արե՞ր) շահը ևս պիտի պահանջէ յընդունողացն, և պիտի պատժէ զայն մարդը՝ որ ծուլութեամբ՝ անգործ և անշահ թողուցած է զիւր առած քանքարը:

ԺԻ.

ԵՐԿՈՒՑ ՈՐԴԻՈՑ ԱՌԱԿՆ:

Մի մարդ երկու որդիք ունէր. երկոցունց  
ևս հրամայեց որ յայզին երթան՝ գործեն: Ա-  
ռաջինն «Երթամ» ասաց, բայց չզնաց. երկ-  
րորդն «Չկամիմ երթալ» ասաց, բայց յետոյ  
զղջացաւ՝ և գնաց: Արն ուրեմն յայս երկու  
որդւոցս՝ կատարող եղև իւր հօր կամացը: —  
Յայտ է թէ՛ վերջինն: (Մատ. ին. 28—31):

Այս առակաւս յանդիմանեց Յիսուս ըզ-  
կեղծաւոր և զանհաւատ շրէայքը, այսինքն՝  
զքահանայապետքը, զծերքը և զդպիրքը, որք  
պարծէին՝ թէ ինքեանք Աստուծոյ հնազանդ  
որդիքն են, բայց զնորա պատուիրանքը՝ որպէս  
արժանն էր՝ չպահէին: շահացոյց նաև զայս՝  
թէ հեթանոսք՝ որք անարգըւում են ՚ի շրէից  
իբրև մեղաւորք, ՚ի զղջումն և ՚ի հաւատոս գա-  
լով՝ յառաջ քան զնոսա պիտի ժառանգեն  
զերկնից արքայութիւնը:

ԺԳ.

ԱՅԳԻ ՏՆԿՈՂԻ ԵՒ ՁԼԻ ՄՇԱԿԱՅ ԱՌԱԿՆ:

Մարդ մի այգի տնկեց՝ պատրաստելով նորա մէջ հնձան և դուբ և աշտարակ, և յետ ամրացուցանելոյ զայն շրջափակ ցանգով՝ յանձնեց մշակաց, և ինքն գնաց ՚ի հեռաւոր աշխարհ: Արբ որ պտղոյ ժամանակն հասաւ, ու զարկեց զլւր ծառայքը այն մշակաց մօտ երկու և երեք անգամ՝ որ զայգւոյ պտուղքը առնուն բերեն: Բայց մշակքն զծառայից մինը տանջեցին, զմինը սպանեցին, և զմինը քարկոծեցին: Արջը զլւր միակ սիրելի որդին ուղարկեց՝ յուսալով թէ ամաչեն ՚ի նմանէ. բայց մշակքն առաւել ևս անզգամացան և զյետին չարիքը գործեցին: Ասան զի երբ որ տեսին զայգետիրոջ որդին՝ բռնեցին զնա, և յայգւոյ միջէն դուրս հանելով՝ սպանեցին, որպէս զի զայգին ինքեանք կարողանան ժառանգել: Աւորովհետև այս այսպէս եղև, ինչ պիտի առնէ այգետէրն՝ երբ որ գայ: — Յայտ է թէ՛ զչար մշակքը չարաչար պիտի կորուսանէ, և զայգին

պիտի յանձնէ այլոց մշակաց՝ որ ՚ի ժամանակին տան նմա զպտուղը (Մատ. ին. 33—41: Մարկ. Ժբ. 1—9: Ղուկ. ի. 9—16):

Այս առական հասկացուցանել կամեցաւ Յիսուս, թէ Աստուած զիւր ծառայքը (չհարէրէւ) ժամանակ ժամանակ ուղարկեց յիւր այգին (Հրէեյ յգէի հեզ)՝ պտուղ ժողովելոյ համար. բայց այգւոյ մշակքն (Հրէեյ հեհարէն) տանջեցին՝ քարկոծեցին և սպանեցին զնոսա: Այժմ ուղարկած է Աստուած զիւր սիրելի Արդին. բայց զնա ևս սպանանել կամին նոյն ազգի քահանայքն՝ դպիրքն և փարիսեցիքն: Վասն որոյ պիտի պատժուին նոքա, և զԱստուծոյ արքայութիւնը պիտի ժառանգեն այն ազգերն՝ որք Աստուածպաշտութեան պտուղ տան:

### ԺԳ.

ԹԱԳԱՒՈՐԻ ԱՌԱԿՆ ՈՐ ԻՒՐ ՈՐԴԻՈՅՆ ՀԱՐՍԱՆԻՔ ԱՐԱՐ:

Թագաւոր մի իւր որդւոյն հարսանիք առնելով՝ շատ մարդիկ հրաւիրեց. և երբ որ ընթրիլքն պատրաստ էր, ուղարկեց զիւր ծառայքը՝

որ զհրաւիրեալքը կոչեն: Ի այց ՚ի հրաւիրելոց ոմանք մի մի պատճառաւ հրաժարուեցան ՚ի գալոյ. մինն գնաց յագարակ, միւսն՝ առուտուր առնելու, և միւսն ևս՝ իւր նոր գնած եզները փորձելու, և այլն: Ոմանք ևս բռնեցին սպանեցին զծառայքը:

Չայս լսելով թագաւորն՝ բարկացալ յոյժ, զօրք ուղարկեց, կոտորել տուաւ զմարդասպանքը, և գնոցա քաղաքը այրեց: Յետոյ դարձաւ և ասաց ծառայիցն «Հարսանիքս պատրաստ էր, բայց հրաւիրեալքն արժանի չէին. գնացէք շուտով՝ ինչ մարդ որ կարողանայք գտանել քաղաքիս փողոցներում և հրապարակներում, հրաւիրեցէք»: Ատարուեցաւ հրամանն, և հարսանեաց տունն լցուեցաւ բազմականօք, որոց իւրաքանչիւրն (բաց ՚ի միոյն) փոյթ էր ունեցած՝ ըստ իւր կարողութեան վայելուչ հանդերձներով (շրեւի) զարդարուիլ: Ակաւանդ յայնժամ և թագաւորն՝ գնոսա տեսանելու, և տեսանելով զայն մարդը՝ որ յանդրդնաբար ներս էր մտած՝ առանց հարսանեկան պատշաճաւոր հանդերձի, «Վ՛նկեր, ասաց նը-

մա, ինչո՞ւ համար մտար յայս տեղս՝ թէ որ չու-  
նէիր հարսանեաց հանդերձ»։ Աւ որովհետեւ  
մարդն այն յանցաւոր գորով՝ պապանձեցաւ և  
չկարաց պատասխան տալ, այն պատճառաւ և  
թագաւորն հրամայեց սպասաւորացն՝ որ ոտ-  
քերը և ձեռքերը կապած դուրս ձգեն զինքը  
(Մատ. իբ. 2—13: Վ. ուկ. Ժդ. 16—23):

Յիսուս այս առակաւս հասկացոյց, թէ  
Հրէայք անլսող լինելով Աւետարանական  
քարոզութեանց, և չկամենալով գալ 'ի նոր  
եկեղեցին՝ ուր հրաւիրուած են, պատժոյ ար-  
ժանի պիտի լինին. և թէ՛ երկնաւոր հարսանի-  
քում (այսինքն՝ երկնից որոշուած ժամ) ևս՝  
միայն առաքինազարդ հոգին կարէ տեղ ունե-  
նալ:

### Ժ.Ե.

ՏԱՄՆ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՌԱԿՆ:

Տասն կուսանք կային, որոց հինգն յիմարք  
էին, և հինգն իմաստունք: Որքա փառուած  
լապտերօք ընդ առաջ ելին փեսայի՝ որ զհար-  
սը 'ի տուն պիտի բերէր: Իմաստունքն այլ ա-

մանօք ևս ձէթ առած էին իւրեանց հետ՝ ըզ-  
լապտերքը միշտ վառ պահելոյ համար. իսկ յի-  
մարքն չէին առած: Փեսայի գայն յետացաւ,  
և ամենքն ՚ի քուն մտին: Ի կէս գիշերին ձայն  
լուեցաւ «Ահա փեսայն գայ, ընդ առաջ ե-  
լէք»: Յայնժամ յարեան (Վեր իշն) նորա, և  
պատրաստեցին զիւրեանց լապտերքը: Աւ որով-  
հետև յիմարաց լապտերքն շիջանելու մօտ էին՝  
յիմաստնոցն իւղ խնդրեցին, բայց սորա չառ-  
ին՝ ասելով թէ «Պուցէ մեզ ևս չբաւակա-  
նանայ մեր իւղն, գնացէ՛ք գնեցէ՛ք յիւղավա-  
ճառաց»: Արբ որ գնացին յիմարքն՝ փեսայն  
եկաւ, և իմաստունքն մտին նորա հետ ՚ի հար-  
սանիքը, և դուռն փակուեցաւ: Ակին յետոյ և  
յիմարքն, և սկսան դրսէն աղաղակել. «Տէր  
Տէր՝ բաց մեզ». բայց զուր եղև նոցա աղաղա-  
կըն, որովհետև չբացուեցաւ դուռն, և ինքեանք  
զնցս պատասխանս լսեցին. «Ամէն ասեմ ձեզ  
ոչ զիտեմ զձեզ» (Մատ. ին. 1—12):

Այս առակաւս հասկացոյց Յիսուս, թէ  
հարկաւոր է մարդու՝ իւր հոգւոյ փրկութեան  
համար նախահոգ լինել, և յառաջ քան զմա-



հը պատրաստութիւն ունենալ առ այն՝ ուղիղ հաւատով և բարի գործովք. և թէ՛ անպատրաստ մեռանողին՝ փակ է միշտ Վերին Հարսնարանի (Երեւոյ Արարչութիւն) մուտն:

### Ժ.Օ.

ՅՈՐԵՆԱՅԱՆԻ ԵՒ ՈՐՈՄՆԱՅԱՆԻ ԱՌԱԿՆ:

Մի մարդ իւր ազարակումը մաքուր և ընտիր ցորեն ցանեց: Յետոյ երբ որ քնած էին մարդիկ, եկաւ նորա թշնամին, նոյն ցորենի մէջ որոմն ցանեց՝ և գնաց: Անցաւ ժամանակ, ցորենն բուսաւ և աճեցաւ (Բնութիւն), որոմն ևս հետը երևեցաւ:

Օյս տեսանելով ազարակի տիրոջ ծառայքն՝ գնացին ասացին նմա «Տէր՝ չէ՞ որ դու բարի սերմն ցանեցեր քո ազարակումդ. ուստի՞ ուրեմն գոյացաւ նորա մէջ որոմն»: Աւերբ որ լսեցին ՚ի նմանէ՛ թէ թշնամի մարդ արած է զայն գործը, հրաման խնդրեցին՝ որ գնան քաղեն և դուրս ձգեն զորոմնը: Իսկ ազարակի տէրն թոյլ չտուաւ. «Մի՛, ասաց, մի՛ առնէք զայդ բանը՝ որ չլինի թէ որոմնի հետ զցորենը ևս ՚ի

բաց խլէք (որիւնք), այլ թողէք որ երկուքն ևս ՚ի միասին ածին մինչև ՚ի հնձոց ժամանակը. և յայնժամ ես ինքս պիտի հրամայեմ հնձողաց՝ որ նախ զորոմնը քաղեն՝ խուրճ խուրճ կապեն՝ այրելոյ համար, և զցորենը իմ շտեմարանացս (աֆարնեիս) մէջ ժողովեն (Մատ. ԺԳ. 24—30):

Օ, այս առակս ինքն Յիսուս մեկնեց ըստ ինդրոյ աշակերտացն. «Բարի սերմն ցանողն, ասաց, է՛ Որդի մարգոյ\* . ագարակն՝ աշխարհըս է. սերմն բարի՝ արքայութեան որդիքն (որորն) են. իսկ որոմն՝ չարի որդիքն (Վեդաւոր՝ աֆարնեիս) են. հնձոց ժամանակն՝ աշխարհիս կատարածն է: Աւ ինչպէս որոմն ժողովուելով կրակի մէջ այրի, և ցորենն հաւաքուելով՝ շտեմարանաց մէջ պահպանուի, այնպէս պիտի լինի և աշխարհիս վերջում: Արդարքն՝ հրեշտակաց ձեռօք պիտի ժողովուին

---

\* Ս. յսինքն՝ Բրիտոս, Որդին Ասորոսոյ, որ մարգանալովն և ծնանելովն մարմնով ՚ի սրբոյ կուսէն Մարիամայ՝ եղև նաև Որդի մարգոյ:

և պայծառանան երկնից արքայութեան մէջ,  
և անօրէնքն պիտի ձգուին կրակի հնոցի (Գժ-  
Խոյ) մէջ:

« Բազում և այլ նշանս արար Յիսուս առաջի  
աշակերտացն իւրոց՝ որ ոչ է գրեալ ՚ի գիրս յայս-  
միկ: Եւ այս այնչափ ինչ գրեցաւ, զի հաւատայ-  
ցէք եթէ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ է ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ,  
և զի հաւատայցէք, և զկեանսն յաւիտենականս ըն-  
դունիցիք յանուն նորա »:

Յ. Կ. Ի. 30. 31:



Faint, illegible text at the top of the page, possibly a header or title.

Faint, illegible text in the upper middle section.


Faint, illegible text in the middle section.

Faint, illegible text in the lower middle section.

Faint, illegible text in the lower section.

Faint, illegible text in the lower section.

Faint, illegible text in the lower section.



1038

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

0028055

1038

« Ազգային գրադարան



NL0028055

Գրենք ընդ Մատթայի և ընդ այլ աստուծոց  
ՁԸ՝ 40 հոգ. արժ: